

ԱՅԱ ՀԱՅՈՒԹ

ՏԵՂԵԿԱԾՈՒ ՄՊԵՆԻՔ ՀԱՅՈՅ ԹԵՐԻ

ԺՐ ՏՎՐԻ, ԹԻ 105, ԵՎՅԵՄՐԵՐ-ԳԵԿՏԵՐԵՐ 2014

2015
4



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100- ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ)

2015 տարին հարիւրամեակն է Հայոց Յեղասպանութեան: Հետեւաբար, իր խորքով ու իմաստով, իր նպատակով ու պատգամով տարբեր թուական մը պէտք է դառնայ: 2015 տարին հրաքանչիր հայու ու ողջ հայութեան կեանքին մէջ:

Հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ իր անշնչելի դրոշմն է ձգած հայոց ցեղասպանութիւնը: Աշխարհի վրայ չկայ հայ, որուն արեան հետ չէ թօքուած ու կեանքին հետ չէ շաղախուած հայոց ցեղասպանութիւնը: Աշխարհի վրայ չկայ հայ, որուն ընտանիքը ենթարկուած չըլլայ ցեղասպանութեան, տարագրումի, հայրենազըլլկումի կամ սիհութքումի:

Հարիւր տարի յիշեցինք խունկով ու աղօթքով մեր մէկուկէս միլիոն նահատակները, որոնք զո՞ր գացին Արեւմըտեան Հայաստանի ու Կիլիկիոյ մէջ հայ ժողովուրդին դէմ Օսմանեան թուրք պետութեան կողմէ ծրագրուած ու գործադրուած ցեղասպանութեան:

Հարիւր տարի յիշեցինք ողբով ու ցասումով մեր մշակութային ու կրօնական դարաւոր արժէքներուն՝ եկեղեցիներուն, վանքերուն, խաչքարերուն, սրբավայրերուն, ձեռագիրներուն ու հոգեմտաւոր անթիւ արժէքներուն քանդումն ու փճացումը նոյն ցեղասպանին կողմէ:

Հարիւր տարի յիշեցինք պոռեկումով ու պահանջատիրական ոգիով մեր ազգապատկան եկեղեցապատկան ու անհատական բազմահազար կալուածներու բոնագրաւումը ցեղասպանին կողմէ:

Արդարեւ, 1915-ին, ցեղասպանութեան ու տարագրումի հետեւանքով ամայացան հայութեան ստեղծագործ ոգիով շենցած ու ծաղկած քաղաքներն ու գիւղերը Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ: Որքա՞ն կը պատշաճն Սաղմոսին հետեւեալ բառերը հայոց ցեղասպանութեան յառաջացուցած մահուան ու քանդումին.- «Ռկ Աստուած, հեթանոսները քու ժառանգութեանդ մէջ մտան, քու սուրբ տաճարդ պղծեցին, Երուսաղէմը աւերակներու դարձուցին: Քու ծառաներուդ դիակները երկնքի թուչուններուն կերակուր տուին, քու սուրբերուդ մարմինը՝ երկրի գագաններուն: Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուսաղէմի շուրջը ու մէկր չկար որ զանոնք թաղէր...» (Սղ 79.1-3):

Տեղասպանին ոճրային նպատակն էր՝ ցեղասպանութեան, տարագրումի ու հայաթափումի ճամբով բնաշնչել հայ ժողովուրդը ու ջնշել Հայաստանը աշխարհի քարտէսէն....:

Սակայն, իր դարաւոր հայրենի հողերէն արմատախիլ եղած, գաղթական ու որբ դարձած հայ ժողովուրդի վերապրող զաւակները երբեք չմոռցան իրենց նահատակները, չմոռցան անոնց սրբազն կտակը: Անոնք լսեցին պատգամը Քրիստոսին թէ՝ «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն Հոգին չե՞ն կրնար սպաններ» (Մտ 10.28): Այս հաւատքով գոտեանդրուած ու հայ ժողովուրդի վերածններեան տեսիլքով հզօրացած, վերակազմակերպեցին իրենց անհատական ու հաւաքական կեանքը. եկեղեցի ու դպրոց շինեցին, համայնքային կառույցներ հաստատեցին ու կազմակերպութիւններ յառաջացուցին սիհութի տարածքին: Անոնք նաեւ ցեղասպանին ու համայն մարդկութեան յիշեցուցին անպատճ մնացած ցեղասպանութիւնը իրենց ժողովուրդին եւ՝ արդարութիւն պահանջեցին:

Արդարեւ, անցնող հարիւր տարիներուն, մեր եկեղեցին, հայ դատի մարմինները, մեր քաղաքական կազմակերպութիւնները եւ վերջին երկու տասնամեակներուն վերանկախացած մեր հայրենի պետութիւնը, քարոզչական, քաղաքական, յարաբերական եւ այլ միջոցներով ո՞չ միայն յիշեցուցին աշխարհին հայոց ցեղասպանութիւնը, այլ նաեւ հետեւողական կերպով ու անխոնչ աշխատանքով հետապնդեցին քաներորդ դարու անպատճ մնացած առաջին ցեղասպանութեան ճանաչումը: Այսօր փաստօրէն մեծ թիւով պետութիւններ, եկեղեցիներ ու կազմակերպութիւններ պաշտօնապէս ճանչցած են հայոց ցեղասպանութիւնը: Հայերու կարգին օտար մտաւորականներ բազմաթիւ աշխատասիրութիւններ հրատարակած են՝ հայոց ցեղասպանութեան զանազան ծալքերը ուսումնասիրող ու անոր ճանաչումը պահանջող:

Արդ, մեր ժողովուրդի զաւակները իրենց կեանքի ամենէն դժուար պայմաններուն մէջ իսկ հաւատարիմ մնա-



ցին իրենց նահատակմերու անմեռ կտակին եւ ուխտեցին, դարձեալ Սաղմոսին բառերով՝ «Ո՛Վ ԵՐՈՍԱՊՀՅՅ, ԵԹԷ ՔԵԿ ՄՈՈՆԱՄ, ԹՌՇ ԻՄ ԱՃ ՃԵՌՔ ԻՐ ՊԱՉՄՈՆՐ ՄՈՈՆԱՅ: ԹՌՇ ԻՄ ԻԵԳՈՒ ԻՄ ՔԻՄՔԻ ՓԱԿՅԻ, ԵԹԷ ՔԵԿ ՀՅԻՇԵՄ...» (Սղ 137.5-6): Հարիւր տարիներ շարունակ մեր ժողովուրդի արի զաւակները յիշեցին ու յիշեցուցին՝ թակելով մարդոց փակ սրտերուն ու մտքերուն դրները եւ հայոց ցեղասպանութեան ճանաչումը դարձնելով իրենց պայքարութին կիզակետը:

Սիրելի՝ ժողովուրդ հայոց,

Նուիրական նոյն պայքարը անհրաժեշտ է որ շարունակուի համագոգային մասշտապով ու վերանորոգ թափով: Ժամանակը հասած է, որ մեր ժողովուրդը իր պահանջատիրութեան նոր ուժականութիւն ու այժմէականութիւն տայ զայն փոխադրելով իրաւական դաշտ՝ միշագգային օրէնքի տուեալներու լոյսին տակ հետապնդելու իր բռնաբարուած իրաւունքները:

Ցեղասպանութեան ու Մարդկային իրաւանց Հոչակագրերը յատակորէն կը շեշտեն, որ ցեղասպանութիւնը ոճիր է մարդկութեան դէմ եւ, հետեւաբար, ցեղասպանը, ըլլայ ան անհատ, կազմակերպութիւն թէ պետութիւն, պէտք է ներկայանայ միշագգային արդարութեան ատեանին: Միշագգային օրէնքը նաեւ կը շեշտէ թէ՝ ցեղասպանութեան ճանաչումը կ'ենթադրէ հատուցում: Հետեւաբար, հայոց ցեղասպանութեան ճանաչումը պէտք չէ նկատել վախճանակէտը հայ ժողովուրդի պահանջատիրութեան: Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ու հատուցումը, որպէս իրարու հետ սերտօրէն ընդելուզուած մէկ ու անբաժանելի ամբողջութիւն, պէտք է դառնայ հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարին ամուր հիմքը ու յատակ նպատակը: Կրնայ ըլլալ, որ աշխարհաքաղաքական ներկայ պայմանները նպատակը չըլլան մեր պահանջատիրութեան: Կրնայ ըլլալ, որ ցեղասպանը իր դիւանագիտական ու տնտեսական ազդու միշոցներով արգելակէ մեր ժողովուրդին կողմէ այս ուղղութեամբ կատարուող ունի փորձ: Սակայն, հակառակ այս դառն իրականութեան, մեր ժողովուրդը առաւել հաւատքով ու յանձնառութեամբ կոչուած է շարունակելու իր պահանջատիրական երթը:

Հայ ժողովուրդը Հայաստանի, Արցախի ու Սփիտքի մէջ միակամ ճիգով ու միակամ ճիգով կը պատրաստուի նշել հարիւրամեակը ցեղասպանութեան: Սովորական ամեակ մը չէ, պէտք չէ՝ դառնայ, հայոց ցեղասպանութեան հարիւրամեակը: Բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութեամբ ու նպատակասլաց մօտեցումով հարկ է արժեւորել այս թուականը մեր ազգի կեանքէն ներս: 100-ամեակը դարձակէտ մը պէտք է դառնայ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման պայքարին մէջ: Վեհական Հայրապետներու նախագահութեամբ յառաջիկա ապրիլ 23, 2015-ին սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունենալիք Հայոց ցեղասպանութեան ճահատական սրբադասումը կստահարար կարեւոր դէաք մը պիտի դառնայ 100-ամեակի ծիրէն ներս:

Հարկ է նաեւ նայիլ 100-ամեակէն անդին...: Յարափոփոխ աշխարհի պայմանները ու առաջնահերթութիւնները յաճախ կը պահանջեն մօտեցումներու, գործելաձեւերու ու շեշտաւորումներու վերատեսութիւն՝ որպէսզի հայ դատին հետապնդման աշխատանքները դառնան համահունչ մեզ շրջապատղ իրականութիւններուն: Հարկ է ըլլալ արթուն ու միշտ միակամ. հարկ է նաեւ ճիշդ կարդալ «ժամանակի նշանները»....:

Հայ դատը իրաքանչիւր հայուն ու ամբո՞ջ հայութեան դատն է, մեր ճահատակներուն դատն է: Արդ, իրաքանչիւր հայ կոչուած է իր ներդրումը կատարելու մեր իրաւունքներու վերատիրացման համահայկական ճիգին:

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, սոյն հայրապետական սրբատառ կոնդակով կոչ կ'ուղենք,

- Մեր թեմերուն ժողովրդային լայն խաւերու մասնակցութեամբ, կրօնական արարողութիւններու, հրապարակային հանդիսութիւններու եւ այլ ձեռնարկներու ճամբով արծարծ պահելու մեր բիւրաւոր ճահատակներու անմեռ յիշատակը ու կենդանի՝ անոնց յաւերժախոս պատգամը:

- Մեր ազգի կեանքէն ներս գործող կազմակերպութիւններուն՝ հաւաքական ճիգով ու միասնական ոգիով ծրագրելու ու արժեւորելու այս կարեւոր դէաքը մեր կեանքէն ներս:

- Մեր դպրոցներուն՝ հայ աշակերտի մարդակերտումի ու հայակերտումի աշխատանքին մէջ յատուկ տեղ տալու 100-ամեակի իմաստին ու պատգամին:

- Մեր մտաւորականներուն՝ աշխատափութիւններու ու դասախոսութիւններու ճամբով անդրադասալու հայոց ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման հրամայականին:

- Մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն՝ գործնապէս մասնակից դառնալու ընդհանրապէս հայ դատի աշխատանքներուն ու մասնաւորաբար 100-ամեակին առթիւ տեղի ունենալիք ճեռնարկներուն:

Թող մեր մէկուկէս միլիոն ճահատակներու յիշատակը միշտ մնայ վառ ու անոնց կտակը՝ միշտ հնչեղ մեր անհատական թէ համահայկան կեանքէն ներս:

Քրիստոնէական հաւատքով վերանորոգուած ու մեր ճահատակներուն պատգամով հօգորացած քալենք յառաջ՝ դէաքի մեր ժողովուրդի պայքար ապագան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալը շնորհօք Ս. Հոգույն եւ յաւէտ օրինեալ ի Մէնջ: Ամէն:

ՀՅԱՅ ՀՅԱՅ ՀՅԱՅ
ՕՇ ՕՇ ՕՇ ՕՇ ՕՇ ՕՇ

**100 ՏԱՐԻ ԱՆՑ
ՎՐԵԺԻՆԴԻՐ ԵՆՔ ԼԻՆԵԼՈՒ...
ՄԻՆՉԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹԻ**



31 դեկտեմբերի գիշերը Ս. Ամենափրկչեան վաճքի յաղթահասակ ժամացոյցը 12 զանգի հարւածներ պիտի հնչեցնի, լուր տալու մեզ, որ մեռեալը՝ 2014 տարին ճամբում ենք դէափ գերեզման. նա իշնելու է գերեզման՝ տանելով իր հետ շատերի ցաւերն ու վշտերը եւ ուրիշների ուրախութիւնը: Այս՛, նա մեռնում է՝ ծնունդ տալու համար մի նոր տարιաց՝ նոր յոյսերով, նոր իղձերով եւ նոր ակնկալութիւններով, որին կոչելու ենք 2015 տարի: Մարդկութեան կեանքից պատմութեան գիրկն է անցնում եւս մի տարի:

2015 նոր տարին մի ուրիշ տարի է լինելու համայն հայութեան համար. հարիւր տարιայ անցեալի մեր պատմութեան հաշւեյարդարն ենք կատարելու: 2015 նոր տարի, որ լինելու է իւրաքանչիւր հայի համար զգօնութեան, արթնութեան, ինքնութեան պահպանման, յիշեցման եւ մանաւանդ պահանջասիրութեան տարի: Լենք Եսայի մարգարէի ձայնը, որ ասում է.

«Մորթւելու տարւեց նա ինչպէս մի ոչխար. եւ ինչպէս անմոռնչ գառն է կանգնում իր բուրդը խուզողի առաջ, այնպէս նա չքացեց իր բերանը: Նա նւաստացաւ, եւ չգտնւեց մէկը, որ պաշտպանէր նրան...» (Ես 53.7-8): Եսայի մարգարէի կողմից այս տողերը գրւել են Յիսուս Քրիստոսի մասին եւ մարգարէն յստակ կերպով բացատրում է, որ Քրիստոսը՝ Աստծու Որդին, որպէս ոչխար տարւում է մորթւելու: Հին Կտակարանի մարգարէներից շատերն եւս ասում են, որ Քրիստոսը գալու է որպէս Թագաւոր «Օծեալ», Մեսիա կամ Փրկիչ: Եսայի մարգարէն իր գրի 53-րդ գլխում բացատրում է, որ Եկողը՝ Քրիստոս, գալու է որպէս «Տառապող ծառայ», ով իր կեանքը կը զոհաբերի համայն մարդկութեան մեղքերի քաւութեան եւ թողութեան համար: Եբրայեցի ժողովուրդը լսում էր եւ տեղեկանում էր այս բոլորի մասին, սակայն չէր կարող ըմբռնել, որ իրենց կողմից սպասած թագաւորը, Եսայի մարգարէի նկարագրած նոյն «Տառապող ծառան» է: Նոր Կտակարանում եւս կարդում ենք թէ ինչպէս Քրիստոս ներքն եւս յստակ կերպով խօսում է այս մասին՝ «Մարդու Որդին ինքն էլ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու եւ իր կեանքը տալու՝ որպէս փրկագին շատերի համար» (Մր 10.45): Ուրիշ տեղ եւս նա ասում է. «Մարդու Որդին պիսի շատ չարչարէի եւ անարգւի» (Մր 8.12): Այս խօսքերից կարելի է հասկանալ ու ըմբռնել, որ Եսայի մարգարէն իրօք խօսում է նոյնքն Աստծու Որդու՝ Քրիստոսի մասին:

Եկէ՛ք հարիւր տարի ետ գնանք եւ կը տեսմենք, որ հայ ժողովուրդը նոյն ճակատագրին ենթարկւեց. որպէս ոչխար տարւեց մորթւելու, նւաստացաւ, անարդւեց, մէկ եւ կէս միլիոն հայ կոտորիւնց եւ չգտնւնց ոչ մի պետութիւն, որ պաշտպանէր նրան...: Թուրք ջարդարներն օգտւելով երոպական պետութիւնների թոլլտութիւնից, վարպետորէն ու ծրագրած կերպով կատարեցին իրենց «առաքելութիւնը», իսկ նահատակ մեր ժողովուրդը հաւատաց մեծ պետութիւնների «արդարամտութեանը»: Ի՞նչպէս կարելի է մոռանալ, որ հայ ժողովուրդն ականատեսն եղաւ իր Հայրենիքի ու շէն քաղաքների աւերմանը, վկան դարձաւ իր սրբութիւնների, ազգային ու հոգեւոր արժեքների կործանման, եւ պարտադրաբար թողեց իր տունն ու տեղը եւ հաստատւեց օտար երկրներում՝ հայրենիքի կարօտն

իր սրտում: Այս՝ հարիւր տարի անցաւ, բայց ազգովիճ մենք չմոռացանք ու չենք մոռանալու թէ որպէս ազատատենչ ժողովուրդ ի՞նչ երազներ, գեղեցիկ ծրագրեր ունեինք, որոնք տակնուվույ եղան եւ պատմութեան գիրկն անցան, չքացան...:

Ինչո՞ւ այս բոլորը պատահեց մեր ժողովորդին, նրա համար միայն որ ազգովիճ ուզում էինք ազա՞տ ապրել եւ ստեղծագործել. նրա համար միայն, որ Քրիստոսի Աւետարա՞նն էինք ընդունում որպէս հայր, եւ կեանքով իմաստալորում էինք Նրա քարոզած ճշմարտութիւնները: Ինչպէ՞ս մոռանանք, որ քանդուցին մեր փառաթեղ ու շքեղ տաճարները, մեր մշակութային կոթողները, աւերեցին մեր կրթութախները, վաճերը, ամրոցներն ու անառիկ բերդերը, մեր ձեռագիր մատեանները, մի խօսքով՝ մեր սրբութիւն սրբոցները:

Այս բոլորից յետոյ, հայութեան նշանաբանը չեղաւ յուսահատութիւն, յուսալքում եւ մահ, այլ եղաւ հաւատ՝ գործով արտայալուած եւ առաւել ԿԵԱՆՔ:

Մեր ժողովուրդը, որտեղ որ Էլ գտնեց, քանդածի տեղ նորը կառուցեց, նոր համայնքներ կազմակերպւեցին, նոր դպրոցներ ու եկեղեցներ կառուցւեցին, մեր ինքնութեան գոյութիւնն ապահովւեց, մայրենի լեզուն պահպանեց եւ մշակութային կեանքը ծաղկեց ամենուրեք: Աս բոլորի շնորհի հայ կեանքի արմատներն առաւել զօրացան:

Անցնող հարիւր տարիների ընթացքում մենք չմոռացանք մեր նահատակներին, յիշեցինք եւ միաժամանակ յիշեցրինք աշխարհին, որ մենք բռնաբարւած իրաւունքներ ունենք: Պահանջեցինք ու տակաւին հարիւր յետոյ, շարունակում ենք մեր պահանջատիրական պայքարը:

Այսօր, եկեք հարց տանք մենք մեզ. որպէս պետութիւն, եևեղի, կազմակերպութիւններ, կառուցներ, միութիւններ, հաւաքականութիւն, անհատ թէ ընտանիք, որտե՞ղ ենք գտնուում այսօր մենք: Պէտք ունե՞նք վերանորոգւելու, պէտք ունե՞նք առաջնահերթութիւնները ճշտելու, պէտք ունե՞նք մեր պահանջները յստակեցնելու եւ ազգային ռազմավարութիւն որդեգրելու: - Բնականաբար՝ այս:

Հարիւր տարի յետոյ՝ այսօր, պէտք ունենք աւելի զգօն լինելու, աւելի արթուն լինելու, ըստ այն՝ վերանորոգելու մեր յանձնառութիւնը եւ շարունակելու մեր պահանջատիրական պայքարը: Հարիւր տարի անց, ազգովիճ վրէժինդիր ենք լինելու, մինչեւ որ արդարութիւնն այցելի մեր ժողովրդին, մինչեւ որ արդարութիւնը վերջնականապէս յաղթանակի:

«ան համար մեծամեծ հարւածներով պիտի վրէժիրնդիր լինեմ, որովհետեւ նա անօրէնութիւն չգործեց...» (Ես 53.9):

Այս՝ մեր նահատակների անթաղ գերեզմանների համար, ու մեր աշխարհական թէ հոգեւոր նահատակների աներեւակայելի ու անբացատրելի չարչարանքների եւ տառապանքների համար, լոյս աշխարհ չեկած մանուկների եւ մայրերի ու տարեցների չարչարալից մահ�ան համար, վրէժինդիր պիտի լինենք: Որովհետեւ նրանք անմենի էին, ոչ մի անօրէնութիւն չին չործել. ինչո՞ւ նման անօրէն «պատիժ»-ի արժանացան:

Հարիւր տարի անց հարց տանք մենք մեզ՝ ասելով. «Յօ՞ երթաս ժողովուրդ հայոց»: Հարիւր տարի անց արդեօ՞ք վրէժինդիր լինել նշանակում է Հայրենիքը պարպել, արտագաղթել, արմատներից հեռանալ, յոյսերն ու իհձերը քամուն տալ եւ կամովիճ օտարանալ ու ծովւել: Հարիւր տարի անց, արդեօ՞ք վրէժինդիր լինել նշանակում է՝ մայրենի լեզուն աղաւաղել եւ օտարամուս բարքեր ու սովորութիւններ ընդունել: Արդեօ՞ք վրէժինդիր լինել նշանակում է՝ հոգեւոր ու ազգային արժեքներից պարպել եւ անսարքերութեան գիրկը նետւել: Երբեք, մենք մեզ թոյլ չտանք, որ մեր իսկ ձեռքով, կամովիճ նահատակներ հայրենիքը, եկեղեցին, դպրոցը, մայրենին, հոգեւոր ու ազգային արժեքները:

Այս՝ վրէժինդիր ենք լինելու այնքան ժամանակ, որ մեր թշնամին՝ ջարդարարը չի խստովանում իր կատարած սխալը եւ դրա համար չի հասուցում մեր ժողովրդին:

2015 թականի նոր տարւայ արշալոյսին, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին վերանորոգենք մեր ուխտը՝ աւելի՝ զգօն լինելու, աւելի՝ արթուն լինելու, միակամ լինելու եւ վերանորոգ յանձնառութեամբ շարունակալու մեր վրէժինդրութեան ուղին, մինչեւ որ արդարութիւնն այցելի մեր ժողովրդին, մինչեւ որ արդարութիւնը վերջնականապէս յաղթանակի:

Ահաւասիկ, այս գիտակցութեամբ պէտք է բացւենք նոր տարւան, որովհետեւ՝

Այս է մեր բիւրաւոր նահատակների կտակը:

Այս է ողջ հայութեան գոյութեան երաշխիքը:

Այս է յաղթանակի ճանապարհը:

Շնորհաւոր ՆՈՐ ՏԱՐԻ:

ԲԱՐԳԵԼ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Սպահանի Հայոց Թեմի

Ամանոր, 2015

**ԳԵՐԾ. Տ. ԲԱՐՁՐԸ ԱՐՔԵՊՈՍ. ԶԱՐԵԱՆԻ ՔԱԺԱՆԱԹԱԿԱՆ ՕԾՍԱՆ ՅՈՒՆԱՆ ՅՈՒՆԵԱԿԻ ԵՒ
ՍՊԱԹԱՆԻ ԲԱԹՈԹ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԸՆՏՐԻԵԼՈՒ 10-ԱՍԵԱԿԻ ԹՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ
ԲԱՍԴԻ ՍՈՒԹԻՒՆ**

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի յատուկ որոշումով կեանքի կոչւած յորելեանական յանձնախումբը դեկտեմբերի 20-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում կազմակերպել էր յորելեանական հանդիսաւոր միջոցառում՝ նշելու Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. ԲարձրԸ արքեպոս. Զարեանի քահանայական ձեռնադրութեան եւ օծման 30-ամեակը եւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ ընտրութելու 10-ամեակը:




Ծրագրին ներկայ էին գերշ. Տ. Վարուժան արքեպոս. Հերկելեանը, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպոս. Սարգսեանը, Թեհրանի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանը, Խրանի հյուամական հանրապետութիւնում Հայաստանի հանրապետութեան լիազօր դեսպան մեծարգոյ պրն. Գրիգոր Առաքելեանը, Սպահանի հայոց թեմի հոգեւորականաց դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ դատի յանձնախմբի, միութիւնների ու հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները եւ սրահը ծայրէ ծայր լցրած նորջուղայեցի եւ շահինշահրցի հայորդիներ:



Հանդիսութիւնն սկիզբ առաւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ եւ յորելեանական երեկոյի հանդիսավար հոգք. Տ. Անանիա վրդ. Գումանեանի արտասանած բացման խօսքով եւ թեմակալ առաջ-

նորդին նկիրւած բանաստեղծութեան բառերով: Ապա Սարին Յարութիւնեանը նարեկեան աղօթքի բառերով մաղթեց առ բարձրեալն Աստած արժանի կերպով սկսելու եւ աւարտին հասցնելու ծրագիրը:

Նարեկեան պահից յետոյ, ցուցադրուեց թեմակալ առաջնորդի կենսագրականի մասին պատմող տեսանիւթը՝ մանկութիւնից մինչեւ եախսկոպոսական աստիճանի հասնելը, որի միջոցով ներկայացւեց Սպահանի հայոց թեմի ազգային իշխանութեան պատասխանաւու անձանց արտայալստութիւններն ու շնորհաւորանքները՝ ուղղած առաջնորդ Սրբազնան Հօրը:



Ակնութետեւ բեմ հրաւիրւեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանը՝ ընթերցելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի ուկետառ կոնդակը՝ ուղղած թեմակալ առաջնորդին՝ իր յորելեանական ամեակների առթիւ, որով Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով Սրբազնան Հօր ծառայական կեանքը՝ նրան շնորհել էր «Արքութեան» մեծ տիտղոսն ու պատիւը: Ներկաները, ովքեր յուղներայ ունենալու էին սրբաւոր կոնդակը, ծափողչոյններով իրենց ուրախութիւնն ու խնդակցութիւնը յայտնեցին այդ կապակցութեամբ:



Բանախօսութեամբ հանդէս եկաւ գերշ. Տ. Վարուժան արքեպոս. Հերկելեանը: Նա գնահատելով թեմա-

կալ առաջնորդին նվիրած այս ձեռնարկը՝ որպէս ժողովրդի կողմից ամենաշատ սիրոյ եւ երախտագիտութեան դրսեւորում, իբրեւ գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանի ընտանեկան ծանօթն ու հարազատք գեղեցիկ կերպով բնորոշեց Սրբազն Հօր յատկանիշներն ու իրայատկութիւնները, նրա կերպարի մէջ զարգացած եւ մնայուն ներկայութիւն տեսնելով՝ ա) Հայ եկեղեցու հեզ եւ խոնարի սպասաւորը, բ) Հաւատքով հարուստ եւ ճառագայթող հաւատարմութեամբ հոգեւորականը, գ) Սիրով լեցուն մարդը եւ 4) Հոգատար ծառայութեան եւ նվիրումի կոչածը: Գերշ. Տ. Վարուժան արքեպս. Հերկէլեանն իր բովանդակալից խօսքի աւարտին նշեց. «Բարգէն քահանան եւ եպիսկոպոսն իր սիրտը կենտրոնացրեց միայն ու միայն մնայուն եւ անփոխարինելի հարստութիւնների վրայ՝ Աստւած, եկեղեցի, հայրենիք, ազգ ու մշակոյթ, եւ նւիրումով ծառայեց նրանց ու դրանով դարձաւ ու կը մնայ ձեր մէջ իրրեւ մի մշակ՝ առանց ամօթի, նաեւ իրրեւ քաղցր, պայծառամիտ եւ վստահելի առաջնորդ»:



Ծնորհաւորանքի եւ ողջոյնի խօսք փոխանցեց նաեւ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանը: Նա գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանի համար նշան բոլոր յատկութիւնների վրա աւելացնելով հնազանդութեան առարինութիւնը, յայտնեց, որ դրա շնորհի Սրբազն Հայոն իր ծառայական 30 տարիների ընթացքում եղել է արժանաւոր եւ հաւատարիմ միաբանը Մեծի Տաճա Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան:



Թեհրանի հայոց թեմի թեմակալ առաջնորդը գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանին փոխանցեց իր եւ Թեհրանի հայոց թեմի ողջ ժողովականութեան ու ժողովրդի կողմից ամենաշատ սիրոյ եւ երախտագիտութեան դրսեւորում, իբրեւ գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանին փոխանցեց Հայոն իր ծառայական մնայն մարդը և ազգային առաջնորդարանի բոլոր ենթամարմինների՝ շնորհաւորանքի եւ գնահատանքի խօսքերով հանդէս եկաւ Պատգամաւորական ժողովի աստենապետ արք. Վարուժ Մինասեանը, յիշեցնելով, որ յոթելեար Սրբազն Հայոը ոչ միայն իր ժողովրդի կողմից սիրոյ եւ յարգանքի է արժանանում, այլ մեծապէս յարգում եւ մեծարում է Իրանի պետական այրերի եւ հաստատութիւնների կողմից:

Դովորդի շնորհաւորանքը եւ բարեմաղթանքը, Սրբազն Հօրը յանձնելով նրանց կողմից պատրաստած նէրը:



Յաջորդիւ արտայալութեց Իրանի իսլ. հանրապետութիւնում Հայաստանի հանրապետութեան լիազօր դեսպան մեծարգոյ պր. Գրիգոր Առաքելանը՝ իր եւ դեսպանութեան ողջ անձնակազմի կողմից շնորհաւորելով յոթելեարին քահանայական ձեռնադրութեան 30-ամեակի, առաջնորդական բեն ստանձնելու 10-ամեակի եւ «Արքութեան» տիտղոսին արժանանալու կապակցութեամբ: Մեծարգոյ դեսպանը գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանին փոխանցեց Հայաստանի հանրապետութեան Մշակոյթի նախարարութեան «Գրիգոր Նարեկացի» յուշամեդալը, որը, ինչպէս պր. Առաքելանը նշեց՝ «Արժանի կերպով պէտք է զարդարի Սրբազն Հօր յանձքը»:



Յանուն Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների, Հաշվերննիշ մարմնի եւ ազգային առաջնորդարանի բոլոր ենթամարմինների՝ շնորհաւորանքի եւ գնահատանքի խօսքերով հանդէս եկաւ Պատգամաւորական ժողովի աստենապետ արք. Վարուժ Մինասեանը, յիշեցնելով, որ յոթելեար Սրբազն Հայոը ոչ միայն իր ժողովրդի կողմից սիրոյ եւ յարգանքի է արժանանում, այլ մեծապէս յարգում եւ մեծարում է Իրանի պետական այրերի եւ հաստատութիւնների կողմից:



Հոգի. Տ. Անամիա վրդ. Գումանեանը ներկայացնելով Սրբազն Հօրն ուղղած շնորհաւորական ուղերձների շարքը, առանձնաբար ընթերցեց միջոցառմանը բացակայ Աստրապատականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Եպս. Զիփթշեանի ուղերձից հատածներ, որտեղ ասած էր. «Նոր Ջուղային յատուկ մշակութային արժէքների հանդէպ մեծ սէրը, բանիւ եւ գործով արտայայտութիւն գտաւ ձեր կեանքում անցած տարիներին... Դուք եղաք այն եզակի հոգեւորականը, ով Հայ Դատր քաջաբար ներկայացրեց Եւրոպական խորհրդարանի ներկայացուցչին, Հայ մշակոյթով յագեցած եւ Հայ հանճարեղ ստեղծագործութեան նմոյց Ս. Ամենափրկչեան Վանքին նրա տւած այցի ակնթարթային պահը օգտագործելով։ Հայ մտաւորականութիւնը եւ Հայ մշակոյթը բնաջնջել փորձած ցեղասպանի դէմ ձեր բարձրացրած արդար զատը, Եւրոպական եւ միջազգային մամուլի արձագանքնե-

բով մեծապէս արժեւորւեց, մեր ժողովրդի բարձրադաղակի ձայնը հանդիսանալով աշխարհի ամբողջ տարածքում»։

Յորելեարին իրենց կատարումները նիկրեցին՝ Շահինշահրի «Նարօտ» մանկա-պատանեկան երգախումը՝ երեք երգեր ծօնելով Սրբազն Հօրը, Արսինէ Ալեքսանդրեանը, ով մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի նագակցութեամբ կատարեց «Հաւուն-հաւուն» եւ «Տաղ Աստածածնի» հոգեւոր երգերը, Մեղրի Ղուկասեանը եւ Գայիսինէ Գէրգեանը՝ արտասանելով «Ըկեղեցին հայկական» եւ «Մեր տաճարները» բանաստեղծութիւնները, Թանիա Մինասեանը եւ Վանաց Շիրամեանը՝ կատարելով «Մայրիկ» եւ «Հայատան» երգերը, եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային միաւորի «Կոունկ» պարախումբը՝ ներկայացնելով «Զարթօնք» եւ «Տօնական» պարերը։

Հանդիսութիւնը եղրափակւեց Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանի շնորհակալական եւ գնահատանքի խօսքերով՝ ուղղած բոլոր այն մարմիններին ու անձերին, ովքեր ծեռնարկի իրականացման միջոցով իրենց սէրն ու յարգանքը ցուցաբերեցին առաջնորդ Սրբազն Հօրը։ Թեմակալ առաջնորդն իր խօսքի մէջ շեշտեց, որ իրեն տրամադրեց մեծագոյն նէրը համայնքի գաւակների կողմից իր նկատմամբ դրսեւորւած նոյն այդ սիրոյ արտայալութիւնն է, ինչն առաւել գօրութիւն է ներշնչում՝ հոգեւորականի եւ ծառայական իր պարտականութիւններն առաւել յանձնառութեամբ եւ ոգեւորւածութեամբ կատարելու։



ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԿՐԵՎԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՎԱՆՈՐԴ-ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Պոլսոյ պատրիարքական ընդհանուր փոխանորդ գերշ. Տ. Արամ արքեպս. Աթեշեանը չորեքշաբթի՝ 2014 թւականի նոյեմբերի 19-ից, երկօրեալ այցելութեամբ, ներկայ եղաւ նոր Ջուղայում։



Գերշ. Սրբազն Հայրն այցելեց նոր Ջուղայի հայոց Եկեղեցին ու դպրոցները եւ մօստիկից ականատեսն եղաւ համայնքում

տարտող կրօնական-կրթական աշխատանքներին։

Սպահանի հայոց թեմի թամակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի կազօպադրութեամբ, պատրիարքական ընդհանուր փոխանորդը տեսակցութիւն ունեցաւ նաեւ Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների հետ, որտեղ ծանօթացաւ Թեմի վարչական-համայնքային գործունեութեանը, նաեւ ժողովականներին տեղեկութիւններ փոխանցեց Պոլսոյ Հայոց պատրիարքարանի գործունեութեան եւ կացութեան մասին։

Գերշ. Տ. Արամ արքեպս. Աթեշեանն երկօրայ այցելութիւնից յետոյ, հինգշաբթի՝ նոյեմբերի 20-ին հրաժեշտ տևեց Սպահանի հայոց թեմին։

«ԹԵԼԵԹՈՒՆ 2014»-Ի ՆԻՒՐԱՀԱՄԲՐԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Ծրջանի Հայ դատի յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ «Ռուլք» երիտասարդական միութեան կազմակերպութեամբ, հինգշաբթի՝ նոյեմբերի 27-ին, երեկոյեան ժամը 7:30-ից, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում կայացաւ նիրահաւաք՝ «Հեռուստամարաթոն 2014»-ի շրջագծում:



Նոր Զուղայի եւ Շահինշահրի հայ համայնքների անդամների հետ միասին, նիրահաւաքի կենտրոն այցելելով՝ նիրատութիւն կատարեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգջ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանը, Իրանի իսլամական խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պետն. Ռոբերտ Բեգլարեանը, շրջանի Հայ դատի յանձնախմբի եւ ազգային մարմինների ներկայացուցիչները:



Թեմական խորհրդի հրաւերով Նոր Զուղա ժամանած «Ոսկէ Ծիրան» կինօփառատօնի մրցանակակիր, «Թեւանիկ» ֆիլմի ռեժիսոր՝ Զիւան Աւետիսեանն եւ իր լուսական նիրաքերեց սոյն կարեւոր գործին:



Ինչպէս նախորդ տարիների, այս տարի եւս համարիկական այս միջոցառմանն իրենց մասնակցութիւնն էին բերել թեմի ազգային իշխանութիւնը, միութիւններ եւ հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը:



Արդինքում գոյացած գումարը գերազանցեց նախորդ տարիներին:



ՏԱ ՕՇՀ ՄԵԴԻ Ո ԱԷՇԹ ԾԱՇԾԱ ԾԱՇԾԱ ԾԱՇԾԱ

Նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի, թալկանիս նոյեմբերի 28-ին, Նոր Զուղայի Հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, ցուցադրությունը տեմիս Զիւան Աւետիսիսի «Թեւանիկ» ֆիլմը: Ցուցադրութեամբ ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, Շահինշահրի հոգեւոր տեսուչ՝ հոգք. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, հոգեւորականաց դասի եւ ազգային մարմինների ներկայացուցիչները, ֆիլմի ռեժիսորը եւ մեծ թուվ հանդիսատես:



Ակգրում, օրւայ հանդիսավար՝ Մանիա Ղուկասեանը, բարիգալստեան խօսք ուղղելով ֆիլմի ռեժիսորին եւ ներկաներին, անդրադարձ ունեցաւ «Թեւանիկ»-ի բովանդակութեամբ, նշելով. «Այն ներկայացնում է երեք ֆիլմ՝ մի վերնագրի ներքոյ: Երեք պատմութիւն, երեք պատանիների դրամաներ, մարդկային խեղւած ճակատագրեր, որոնք պէտք է յիշւեն եւ փոխանցւեն սերունդներին: «Թեւանիկ» ֆիլմը Արցախեան պատերազմն ապրած մարդկային ճակատագրերի, ապրումների ու պայքարի մի ամբողջական պատկեր է»:

Ապա անդրադարձաւ ֆիլմի ռեժիսոր Զիւան Աւետիսիսի կենսագրութեամբ, նրա նկարահանած խաղարկային եւ վաւերագրական ֆիլմերին եւ հայաստանու ու միջազգային տարբեր կինօփառաւոններին արժանացած մրցանակներին, այնուհետեւ հանդիսատեսին հրավիրեց դիտելու ֆիլմը:

Ֆիլմի աւարտին, բեմ հրավիրեց Զիւան Աւետիսիսի կենսագրութեամբ, նրա նկարահանած խաղարկային հայոց գաղտնաբառը և ապա հանդիսատեսին՝ իր ներկայութեան համար, ապա հանդիսատեսին՝ իր ներկայութեան համար: Նա իր ուրախութիւնը յայտնեց Նոր Զուղայում «Թեւանիկ»-ը էկրանի վրայ ցուցադրելու կապակցութեամբ, նշելով, որ «Թեւանիկ»-ի նպատակն է արցախեան պատերազմը ներկայացնել ոչ միայն հայաստանաբնակ հայութեամբ, այլ նաև Սփինոզում ապրող հայերին, եւ ի մասնաւորի օտարելքուացի հանդիսատեսին, եւ հենց նոյն պատճառով էլ փորձ է արել ազնի կերպով պատմել մի ֆիլմ ազատամարտի մասին, որը նկարահանել է իրական փաստերի հիման վրայ: Ֆիլմի ռեժիսորն աւե-

լացրեց, որ այժմ աշխատում է յաջորդ ֆիլմի վրայ, որը կոչում է «Վերջին բնակիչը» դարձեալ իր առանցքում ունենալով Արցախ աշխարհը: Իր արտայայտութիւնների աւարտին, Զիւան Աւետիսիսին իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Նոր Զուղայի հայ համայնքին՝ այս գործում իր ներդրումն ունենալու համար:



Վերջում բեմ հրավիրեց Թեմիս բարեշան առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, արտայայտելով: Սրբազն Հայրն իր խօսքերում նշեց. «Այս ֆիլմը յուզմունքից բացի, առաւել հպարտութիւն է ներշնչում մեղ եւ առիթ ստեղծում առաջ նայելու»: Ապա անդրադանալով ֆիլմի երեք բաժիններին, նշեց, որ երեք մասն էլ ցոյց է տալիս մի դրագ, որում ներկայացւում է մեր ժողովրդի ազատատենչ պայքարի ոգին, անձնազնութիւնն ու հայրենասիրութիւնը: Նա շնորհաւորելով Զիւան Աւետիսիսին եւ ֆիլմի նկարահանող անձնակազմին՝ այս եւ նման ֆիլմերի պատրաստման համար, յաջողութիւն մաղթեց նրանց եւ իր խօսքը եզրափակեց, ասելով.- «Պատիւ մեր հերոսներին, տղաներին, պատանիներին, տարեցներին, ովքեր միասնական ոգով, Հայաստանում, Արցախում եւ Սփինոզում, կարողացան նման ազատագրական պայքար տանել, արիւն թափել եւ յաղթանակ ապահովել: Պատիւ նրանց»:



Յատկանշելի է, որ ֆիլմի տոմսերի վաճառքից գոյացած հասույթն ամբողջովին յատկացւելու է ֆիլմի նկարահանման ծախսերին:

ՀԱՆԴԻՓՈՒՄՆԵՐ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «Ս. ՆԵՐՍԵՍ ԾԱՌՀԱՎԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ



Թուականիս հինգշաբթի՝ 20 Նոյեմբերի առաջտեան, Թեմական խորհրդի հրաւերով, Ս. Ամենափրկչեան Վանքի «Ս. Ներսէս Ծնորհալի» գրադարանում հանդիպում տեղի ունեցաւ Նոր Զուղայի եւ Շահինշահրի հայոց ազգային դպրոցների պատասխանատուների ու երիտասարդական կառոյցների անդամների մասնակցութեամբ, որի նպատակն էր նրանց ծանօթացնել գրադարանի նոր համակարգին, ինչպէս նաև միջոցներ խորհել գրադարանից օգտողների համար որակեալ ծառայութիւններ մատուցելու ուղղութեամբ:



Հանդիպման առաջին բաժնում, Թեմական խորհրդի անդամ տկն. Քառոյին Դիլանշեանը, յիշեցնելով գրադարանների դերը քաղաքակիրութ սերունդ կերտելու գործում, աելացրեց նաև, որ ազգային մարմինները միշտ կարեւորել են համայնքին պատահի-երիտասարդների մէջ ընթերցանութեան հանդէպ սէրը զարգացնելու եւ նրանց հայ ու օտարազգի գրականութեան հետ ծանօթացնելու խնդիրները, ապա հակիրճ կերպով տեղեկութիւններ փոխանցեց Թեմական խորհրդի միջոցով գրադարանում կատարած նոր-

գործիւնների եւ կառոյցի արդիականացման ուղղութեամբ տարրած աշխատանքների մասին:



Այնուհետեւ գրադարանի պատասխանառու օրդ. Վերգինէ Միրզախաննեանը, ներկաներին բացատրութիւններ փոխանցեց գրադարանում ստեղծած նոր համարատրութիւնների մասին, այդ թում մատնանշեց Էլեկտրոնային գրացուցակի պատրաստմանը, գրքերի առցանց որոնման համակարգին, որը հասանելի է նաև Ազգային Առաջնորդարանի կայքի միջոցով եւ համակարգչային ցանցի ընդլայնմանը, իսկ շարունակութեան մէջ ներկաներին ծանօթացրեց գրադարանի ապագայ աշխատանքներին, անդրադառնալով գրքերի թանացման եւ համացանցում տեղադրման, գրական ու հերթափառութեան երեկոներ կազմակերպելու ծրագրերին:



Հանդիպման ընթացքին մասնակիցները եւս տեսակէտներ ու առաջարկներ փոխանցեցին գրադարանի արդիւնաւետութիւնը բարձրացնելու ուղղութեամբ, յատկապէս կարեւորելով հասարակութեան բոլոր անդամներին եւ ի մասնաւորի նոր սերնդին ընթերցանութեան ոլորտ ընդգրկելու եւ արտասահմանեան գրադարանների ու տարբեր հետազօտական կենտրոնների հետ կապեր իրականացնելու խնդիրները:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄՁՐԴԿԱՎՅԹԻ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՇԻՒՐՎԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅՅԵ Ս. ՎԱՆԵԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ



«ԻԻՆԵՍԿՕ»-ի հովանաւորութեամբ աշխատող Լիբանանի մարդկային իրաւունքների կենտրոնի նախագահը եւ երկու այլ անդամներ, ընկերակցութեամբ տեղական պետական պաշտօնատարների եւ համալսարանական դասախոսների, հիմգշաբթի՝ 2014 թւականի դեկտեմբերի 25-ի կէսօրին այցելեցին Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի, «Խաչատուր կեսարացի»-ի անան թանգարան, ապա Ծաղկեայ դահլիճում տեսակցութիւն եւ զրոյց ունեցան Սպահանի հայց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արքեպոս. Զարեանի, Պատգամաւորական ժողովի դիակնի, Թեմական ու Կրօնական խորհուրդների ներկայացուցիչների հետ:



Հանդիպման ընթացքում, պատիրակութեան պատասխանատուն ընդհանուր գծերով ներկայացրեց խմբի Իրան ճամբորդելու նպատակների մասին, ընդգծելով կրօնների երկխօսութեան եւ միջազգային յարաբերութիւնների զարգացման պարագաները:

Սուածնորդ Սրբազն Հայոց խօսեց ընդհանրապէս իրանահայութեան եւ մասնաւորաբար Սպահանի հայ համայնքի կացութեան վերաբերեալ, շեշտելով մարդկային իրաւունքների ներկայացուցիչների յոյժ կարեւոր դերը անարդարութիւնների վերացման գործում: Գերշ. Տ. Բարգէն արքեպոս. Զարեանը կարեւորութեամբ ընդգծեց, որ նման կենտրոններ պէտք է իրենց ձայնը բարձրացնեն Ադրբեջանի հանրապետութեան որդեգրած քաղաքականութեան դէմ, որի հետեւանքով ծրագրաւորած կերպով եւ պետական միջոցներով աւերտում են հայկական պատմա-մշակութային կոթողները, ինչպէս Հին Զուղայի խաչքարերը, որոնք թէեւ հայկական եւ միջազգային մշակոյթի մեջ

արժէք ներկայացնող հնութիւններ էին, սակայն երոպական երկրների աչքի առաջ հողին հաւասարւեցին: Թեմակալ առաջնորդը յիշեցրեց, որ այս մասին արտայայտել է նաև Երոպայի միութեան արտաքին յարաբերութիւնների բաժնի նախագահ Քաթրին Աշտոնի այցելութեան ժամանակ: Գերշ. Սրբազն Հայրն մատնանշեց, որ հակառակ աշխարհում տարածւած սխալ քարոզչութեան, Իրանի հայ. հանրապետութիւնը պետական մակարդակի ծրագրերով պահպանում եւ վերանորոգում է հայկական հնամենի ու պատմա-մշակութային արժէք ներկայացնող կոթողները:



Անդրադասականով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, Թեմակալ առաջնորդը յատուկ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայսնեց արաբական աշխարհին, առ այն, որ Մեծ եղեռնի օրերին, բազմաթիւ արար ցեղախըմբեր աքսորած հայ գաղթականներին ապաստան տուցին եւ հոգատարութեամբ վարելով՝ բազմաթիւ հայերի փրկեցին մահան ճիրաններից:

ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԻՍԱՎԱՐԿՎԱՌՈՒԹԵԱՆ ԶԵՐՆԱՎԴՊՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թեմակալ Առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի նախագահութեամբ, կիրակի՝ 2014 թւականի նոյեմբերի 30-ի առաւոտեան, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում մատուցւեց սուրբ եւ անմահ Պատարագ թաղի ծխատէր հովի՝ արժն. Տ. Մեսրոպ աւ. քինչ. Գալստանեանի ձեռամբ:

Ներկայ էին Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի, Ն.Զ. Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամները եւ բազմաթի հաւատացեաներ:



Ս. Պատարագի ընթացքում, «Տէրունական աղօթք»-ից անմիջապէս առաջ, ընդհատւեց Ս. Պատարագի սովորական ընթացքը եւ արժն. Տ. Վազգէն քինչ. Քէօշկէրեանը, իբրեւ խարտահիլակ, եկեղեցու ատեանի առջեւ գամին բազմած առաջնորդ Սրբազն Հօր մօս առաջնորդեց երկու անձանց՝ յանձինս Ալբերթ Ղազարեանի եւ Արմէն Բաղումեանի, դպրութեան եւ կիսասարկաւագութեան պաշտօն ստանալու համար:



Դպրութեան եւ կիսասարկաւագութեան ձեռնադրութիւնների կարգը կատարւեց իր բոլոր մանրամասնութիւններով, որը խորհրդանշական եւ իմաստալոր բաժինների մի ամբողջութիւն էր: Նախ դպրութեան պաշտօն տրւեց Ալբերթ Ղազարեանին եւ Արմէն Բաղումեանին. նրանց գլխի մազերից խաչաձեւ կտրւեցին՝

ի նշան աշխարհիկ զբաղումներից հեռացման եւ եկեղեցական կեանքին նիրելու, ապա դոնապանութեան, լուսարարութեան, ընթերցանութեան եւ այլ փոքր պաշտօններ ստացան: Կիսասարկաւագութեան ձեռնադրութեան արարողութեան շարունակութեան մէջ նրանց միացաւ նախագէս դպրութեան պաշտօն ստացած Շանթ Թահմազեանը, Շահինշահրից:



Առաջնորդ Սրբազն Հայոր, ձեռնադրութիւնից յետոյ իր իմաստալից քարոզի ընթացքում, ուրախութիւն յայտնելով ձեռնադրութեան առթիւ, շնորհաւորեց թեմի բոլոր զաւակներին, հայոց եկեղեցուն եւ պաշտօն ստացած անձանց ընտանիքների պարագաներին, իսկ երիտասարդ անհատների ներկայութեանը եկեղեցու մէջ, առաւել եւս՝ եկեղեցական ծառայութեանը նրանց նիրելուն մեծ նշանակութիւն տես եւ այն ոգեւորութեան առիթ համարեց ու ասաց. «իւրաքանչիւր մարդ երկրաւոր այս կեանքում Աստծու կողմից տրւած կոչում եւ չնորհք ունի: Բայց կարեւորն այն է, որ մարդ լիի այն ձայնին, որն իրեն առաջնորդում է՝ իր չնորհքները շահարկելու եւ Աստծուն ու մարդկութեանը ծառայեցնելու: Ես գնահատում եմ նրանց, ովքեր իրենց ամենապարզ աշխատանքի մէջ կատարեալ են. ի՞նչ արժեն այն անձինք, ովքեր մեծամեծ պաշտօններ են զրադեցնում եւ բարձրագոյն կրթութիւնների ու վկայականների են արժանացել, սակայն չզիտեն եւ չեն ուզում իրենց կարողութիւնները կատարեալ կերպով ի սպաս զնել Աստծուն ու մարդկութեանը»: Սուաջնորդ Սրբազն Հայոր խօսքն ուղղելով նոր ձեռնադրած կիսասարկաւագութիւններ ասաց. «Դուք այսօր Հայ եկեղեցու առաջին փոքր աստիճաններն ստացաք: Աւետարանի խօսքի համաձայն՝ եթէ փոքրի մէջ հաւատարիմ գտնւեցիք՝ աւելի մեծ պաշտօններ կը վստահւեն ձեզ: Կարեւորն այն է՝ ինչ որ անելու էք՝ հաւատո՞վ, նւիրումով եւ սիրով անէք, առանց տրտնջալու: Ձեր ծառայութեան մէջ եղէ՞ք խոսնարհ, հեզ եւ պարկեշտ, որպէսզի ամօթով չմնաք ո՛չ Աստծու, ո՛չ եկեղեցու եւ ո՛չ էլ մարդկութեան առջեւ: Ձեր օրինակն ու տիպարը թող լինի Յիսուս Քրիստո-

սը, ով իր կեանքի՝ օրինակով ցոյց տւեց, որ մեծութիւնը՝ խոնարհութեան, ծառայութեան եւ պարկեշտութեան մէջ է»:



Արարողութիւնից յետոյ, Եկեղեցու սրահում, Նոր Զուլայի Հայոց Եկեղեցեաց վարչութեան միջոցով կազմակերպել էր հիւրասիրութիւն, որտեղ սրտի խօսքեր արտասանեցին նոր ձեռնադրած կիսասարկաւագների խարտավիլակ արժն. S. Վազգէն քին. Քէօշկէրեանի եւ Կրօնական խորհրդի ատենապետ պրճ. Արշալոյն Խուրավերդեանի միջոցով: Առաջնորդ Սրբազն Հօրը, արժն. S. Վազգէն քին. Քէօշկէրեանի, հոգեւորականաց դասին, Կրօնական խորհրդին եւ Եկեղեցեաց վարչութեանն ուղղած շնորհակալութեան-

ն Երախտիքի խօսք ասաց բրշն. Ալբերթ կիս. Ղազարեանը նոր կիսասարկաւագութեան պաշտօն ստացածների անունից:



Նոր ձեռնադրած կիսասարկաւագներն իրենց ծառայական կեանքի սկզբում հոգեւոր գեղեցիկ մի խմբերգով իրենց ուխտն ամրապնդեցին՝ ամբողջապէս Տիրոջը նւիրելու եւ Նրա Ս. Եկեղեցու հաւատարիմ ու հնազանդ սպասարկողները լինելու տրամադրութեամբ:

Թեմակալ առաջնորդ գերշ. S. Բարգէն եպս. Զարեանն իր հայրական խրառով եւ իմաստուն խօսքով եզրափակեց միջոցառումը, որից յետոյ ներկաները շնորհաւորեցին նոր ձեռնադրած կիսասարկաւագներին՝ բարեմաղթանքներ կատարելով նրանց:

Ս. ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՏՕՆՀ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՍՏԻԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Շաբաթ՝ դեկտեմբերի 20-ի առաւօտեան, Նոր Զուլայի Ս. Աստիածածին Եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ S. Բարգէն եպս. Զարեանի, Ս. եւ անմահ պատարագ մատուցեց Քրիստոսին հաւատացող մեր անդրանիկ թագաւոր Ս. Արքարի տօնի առթիւ եւ Արքարեան բարերար գերդաստանի յիշատակին, որը 1841 թականին հիմնադիրը հանդիսացաւ Նոր Զուլայի Ս. Աստիածածին Եկեղեցու շրջափակում գտնուող «Հայկեան Հայրեասիրական» դպրոցի:



Օրույ պատարագին էր նոյն Եկեղեցու ծխատէր քահանայ S. Խաչատոր քին. Զարգարեանը: Արարողութեանը մասնակցել էին նաև թեմի հոգեւորականաց դասը եւ երգեցողութեամբ՝ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Ս. Պատարագին ներկայ էին Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ Նոր Զուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամները, Նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի սամերը, ընկերակցութեամբ դպրոցի տեսչութեան, ուսուցական կազմի ու Ծնողական խորհրդի անդամների եւ հաւատացեալ ժողովուրդ:



Արարողութեան ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց թեմակալ առաջնորդ Տ. Բարգէն եպս. Զարեանը: Ակզբում Սրբազն Հայրն անդրադառնալով Ղուկաս աւետարանի 7-րդ գլխի 1-10-րդ համարներում նշած պատմութեանը, որտեղ մի հարիւրապետ իրեն Քրիստոսի այցելութեանն արժանի շիամարելով, խնդրել էր Փրկչին խօսքով բուժել իր հիւանդ ծառային, մէջբերեց Քրիստոսի այն խօսքը, որը նոյն հարիւրապետի հաւատի մասին իմանալով ասել էր. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Խրաչյի մէջ անդամ այսպիսի հաւատ չգտայ»: Թեմակալ Առաջնորդն իր հայրական օրինանքի շարունակութեան մէջ անդրադառ նաեւ հայոց Արքար թագաւորի ամուր հաւատին, ով երբ հիւանդացաւ, նամակ յուեց Քրիստոսին, որպէսզի Տէրը հեռուից բուժի իրեն:



Սրբազն Հայրն առանձնապէս յիշեց Արքարեան թարերար գեր-

դաստանին եւ յորդորեց փոքրիկներին շանասիրաբար սովորել ու գիտութեամբ հարուստ մեծանալ:

Արարողութեան ընթացքում մանկապարտէզ-նախակրթարանի բոլոր սաներն ու ներկայ ժողովուրդը հաղորդութիւն ստացան:

Ս. պատարագից յետոյ, եկեղեցու բակում, Նոր Զուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան յանձնարարութեամբ եւ մանկապարտէզ-նախակրթարանի Ծնողական խորհրդի միջոցով պատրաստած գունագեղ փաթեթաւորմամբ մրգերը, Կրօնական խորհրդի անդամ Սարօ Տ. Ցովհաննիսեանի եւ Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան անդամուիի Անժել Ղարախանեանի միջոցով բաժանեցին սաներին:

Այնուհետեւ Ս. Աստածածին եկեղեցու Տիկնանց յանձնախմբի կազմակերպութեամբ եկեղեցու սրահում տեղի ունեցած հիւրասիրութիւն, որտեղ մանկապարտէզի սաներից ոմանք ասմունքցին դպրոցում սովորած գեղեցիկ բանաստեղծութիւններից:



Հիւրասիրութեան աւարտին առաջնորդ Սրբազն Հայրն իր օրինութիւնը փոխանցելով ներկաներին, նախ գնահատանքի խօսք ուղղեց մանկապարտէզ-նախակրթարանի աշխատակազմին՝ շանասիրաբար աշխատելու համար, ապա Նոր տարիայ սեմին բոլորին մաղթեց առողջութիւն եւ յաջողութիւններով լի տարի, ցանկանալով, որ 2015 թականին, որը համբնենում է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, համայն հայութիւնը վերանորոգւած հաւատով կը շարունակի իր հաւաքական պահանջատիրական պայքարը:

Ս. ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՕՆԸ ԵՒ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՅՈՒ ԿԱՌՈՒՅՄԱՆ 400-ԱՄԵԱԿԸ



Հինգշաբթի՝ դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոս Նախավկայի տօնի օրը, Նոր Զուղայի նոյնանուն եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բարգէն արքեպոս. Զարեանի, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցւեց ձեռամբ Տ. Վարուժան արքեպոս. Հերկէլեանի, որին սպասարկում էին Տ. Մեսրոպ աւ. քին. Գալստանեանը եւ Տ. Խաչատոր քին. Զարգարեանը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վաճրի «Կոմիտաս» երգշախումը, դեկավարութեամբ՝ Արմէն Ամիրխանեանի: Արարողութեանը ներկայ էին թեմի հոգեւորականաց դասը, ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հայատացեալ ժողովուրդ:



Խորհրդաւոր գուգադիպութեամբ, Ս. Ստեփանոսի տօնին գուգահեռ նշեց նաև Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցման 400-ամեակը: Սոյն առիթն իր սրբատառ կոնդակով շնորհաւորել էր Մեծի Տաճան Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Վեհակիան Հայրապետը, որն ընթերցւեց թեմակալ

առաջնորդ Տ. Բարգէն արքեպոս. Զարեանի միջոցով, հայատաւոր ժողովուրդի յոտընկայս ունկնդրութեամբ:

Կոնդակի ընթերցումից յետոյ, յաւոր պատշաճի քարոզեց Տ. Վարուժան արքեպոս. Հերկէլեանը: Նա իր քարոզի ընթացքում անդրադառնալով Ս. Ստեփանոս Նախավկայի անձի եւ գործունելութեան մասին, յորդութեց սարկաւագներին օրինակ վերցնել քրիստոնեայ առաջին մարտիրոսից՝ իրենց կեանքն ընծայելով ճշմարտութեան քարոզութեանն ու հայատի պաշտպանութեանը: Պատարագիշ Սրբազն Հայրն ակնարկելով Նոր Կուակարանում Ս. Ստեփանոս նախասարկաւագի մասին գրած բառերին՝ «Ստեփանոսը Աստծու չնորհով եւ գորութեամբ լցւած մի մարդ էր», շեշտեց, որ իրաքանչիւր մարդ, ի մասնաւորի եկեղեցու ծառայութեանը լծած անհատ, Աստծու կողմից իրեն տրած շնորհները պէտք է օգտագործի ի փառս Աստծու եւ իր եկեղեցու:



Ս. Պատարագի աւարտին թեմ բարձրացաւ հոգեւորականաց դասը, որի միջոցով եւ առաջնորդ Արքա-

զան Հօր գլխաւորութեամբ, Ս. Ստեփանոսի աջ-մասունքով կատարեց Զօրինների արարողութիւն:



Եկեղեցական արարողութիւնից յետոյ, Ս. Ստեփանոս Եկեղեցու բակում, Նոր Զուղայի Հայոց առաքելական Եկեղեցեաց վարչութեան եւ Եկեղեցու Տիկնանց յաճճախմբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որի ընթացքում սարկաւագներին իրենց տօնի առթիւ շնորհաւորանքներ փոխանցեցին S. Մեսրոպ աւ. քինց. Գալստանեանը, ով միաժամանակ վարեց միջոցառումը, Կրօնական խորհրդի ատենապետ Արշալոյս Խուդավերդեանը եւ Նոր Զուղայի Հայոց առաքելական Եկեղեցեաց վարչութեան ներկայացուցիչ Ֆրիդա Ալլահիվերդեանը: Հիւրասիրութեան ընթացքում հնչեցին նաև Երգեր ու ասմունքներ, որոնց միջոցով առաւել ծերութիւն հաղորդվեց ծրագրին:

Տ. Բարգէն արքեպոս. Զարեանը Եկեղեցեաց վարչութեան միջոցով պատրաստած նւյնաները յանձնեց սարկաւագներին եւ եզրափակելով կոկիկ յայտագրով միջոցառումը, իր հայրական խօսքը փոխանցեց, շեշտելով, որ Եկեղեցու սպասարողների կոչումն է առաւել խոնարհութեամբ, մաքրութեամբ եւ ամենայն պատասխանատութեամբ սպասարկել Ս. Սեղանին, ծառայել Աստծուն, Եկեղեցուն եւ Եկեղեցու հաւատառոր զաւակներին: Թեմակալ առաջնորդը մեծ պատի եւ հպարտութեան առիթ համարեց Եկեղեցու կառուցման 400-ամեակի նշումը՝ այն նկատելով իբրև հայի կառուցողական ոգու եւ բազում դժւարութիւններին դիմակայելու ունակութեան փաստն ու վկան:



Վերջում ներկաները շնորհաւորեցին տիրացուներին իրենց տօնը եւ բարի ծառայութիւն մաղթեցին նրանց:

Ü.ê.ú.î.î. ²ð²ø ²î ²âàôæí àêæð²úàò òºø²ëä ²üàôâº²ü 100-²øº²î æü üðæðô²ì
éð' ²î ²è î àü. ²î æàüâºðòàôø êä ²ð²üæð²úàò âºøæºîºøºðæüºðàôø



Հոգեւորականաց դասը, ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հաւատար ժղովուրդը: Հայրապետական սրբատառ կոնդակը S. Վազգեն քին. Քէօշկէրեանի միջոցով թափօրի ընկերակցութեամբ բարձրացւեց Ս. խորան, որտեղից ի յուր ներկա հաւատառների ոնթերուեց թեմակա առաջնորդ Սրբազն Հօն միջոցով:

Ըստ այս պատճենի կամաց համարակալարը ըստ ցուցանիշի բարձրագույն առաջնորդ Մաքարա ՀՀ Արշակունյաց:

Կիրակի՝ դեկտեմբերի 28-ին, ինչպէս Մեծի Տանն
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերի եկեղեցի-
ներում, այնպէս էլ Սպահանի հայոց թեմում Նոր Զու-
ղայի Ա. Ստեփանոս Եկեղեցում եւ Շահինշահրի
«Արքոց Վարդանանց» դպրոցի սրահի մէջ տեղի ու-
նեցող Ա. եւ անմահ Պատարագի ընթացքում, ընթերց-
ւեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նիդրած
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ո.Օ.Տ.Տ. Արամ
Ա Վեհափառ Հայրապետի հայրապետական սրբա-
տառ կոնդակը:

Նոր Զուղայի Ս. Ստեփանոս Եկեղեցում տեղի ունեցող արարողութեանը նախագահում էր Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Տ. Բարգէն արքեպոս. Չարեանը, Աերկայ էին նաև հիւրաբար Նոր Զուղայում գտնող Տ. Վարուժան արքեպոս. Հերկէնեա-

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՅԻ ՄԵՇԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՍՊԱՋԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՅՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Չարաթ՝ դեկտեմբերի 27-ի երեկոյեան, Նոր Զուլայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի տեղի ունեցաւ հայ ուսուցչի մեծարման երեկոյ, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արքեպա. Զարենը, ազգային մարմինների ներկայացուցիչներ ու Նոր Զուլայի եւ Շահինշահրի հայոց ազգային դպրոցների՝ հանգստի կոչւած ու աշխատող հայ տեսուչներ, փոխտեսուչներ եւ ուսուցիչներ: Ծրագրին հրավիրել եւ ներկայ էր նաև վերշերս առյաւտ մեզանից բաժանաւած հայոց ազգային դպրոցների տարիների ուսուցչութիւնների հանգուցեալ Անահիտ Կիրակոսեանի ամուսինը՝ Ռազմիկ Տէրիգորեանը:



Երեկոյի հանդիսավարութիւնը կատարեց Կրթական խորհրդի գործավար Մարգիկ Ղարիբեանը, ով սկզբում ներկաներին հրավիրեց մէկ բոպէ յոտընկայս լուսութեամբ իրենց յարգանքի տուրքը մատուցել հանգուցեալ Անահիտ Կիրակոսեանի անթառամ յիշատակին, ապա ողջունելով ներկաներին, հրավիրեց Կրթական Խորհրդի ներկայացուցիչ Սարօ Ալետումեանին օրիա առթիւ խորհրդի խօսքն արտապայտելու:

Տէր. Սարօ Ալետումեան իր խօսքում հայ ուսուցիչներին հայեցի դաստիարակութիւն տուղ մերօրեաց մաշտոցներ անանելով՝ կարեւորութեամբ նշեց. «Այս տարի լրանում է Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը, որի շրջագծում մեր թեմում ծրագրւել եւ իրագործում են քաղաքական, մշակութային եւ այլ բնոյթի բազմատեսակ միջոցառումներ ու աշխատանքներ: Կրթական ոլորտի աշխատանքների գծով բոլորս միասնաբար՝ սկսած Կրթական խորհրդից մինչեւ հայոց ազգային խրաքանչիւր դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ, ծնողական խորհուրդ եւ աշակերտ, մեր յատուկ միջոցառումներն ու դաս-

տիարակչական եւ քարոզչական աշխատանքները պէտք է կազմակերպենք յիշել, յիշեցնել եւ պահանջել նշանաբանի ներքոյ, քանի որ սա է հայ ուսուցչի, եւ յատկապէս սկիւռքեան պայմաններում հայապահպանման խնդրի առջեւ կանգնած հայ ուսուցչի կարեւորագոյն առաքելութիւնը»:



Ծրագրի շարունակութեան մէջ հանգուցեալ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին արտապայտելու համար բեմ հրավիրեց նրա գործընկերներից՝ «Արմէն» տարրական կրթահամալիրի հայերէն առարկաների դասաւու Միգանուշ Տէր Մարտիրոսեանը, որը նոյն դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի անունից ընթերցած իր խօսքում, անդրադառնալով հանգուցեալի յատկանիշերին եւ իւրայատկութիւններին, խորը ափսոսանք յայտնեց նման բարի, աշխոյժ եւ յանձնառու գործընկերու կորստի համար: Խօսք տրիւց նաև հանգուցեալի ամուսին Ռազմիկ Տէրիգորեանին, ով շնորհակալութիւն յայտնելով Կրթական խորհրդին միջոցառմանը հրավիրելու կապակցութեամբ, առիթը շնորհատրելով բոլոր ուսուցիչներին, մի գեղեցիկ ծաղկեփունջ նվիրեց նրանց:



Ապա բեմը տրամադրեց «Անի» նախախմբի անդամներին, ովքեր ղեկավարութեամբ Արին Խաչիկեանի եւ երգեցողութեամբ Կարէն Օհանեանի, Սարօ Ղարախանեանի եւ Րաֆֆի Խուդաբախշեանի երեկոն առաւել զարդարեցին հայ երգերի կատարումներով:

Գնահատագրերի բաշխման բաժնում ձեռամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արքեպոս. Զարեանի, թեմի Պատգամատրական ժողովի դիւանի փոխատենապետ Մկրտիչ Աւետումեանի, Թեմական եւ Կրթական խորհուրդների ատենապետեր Նոէլ Մինասեանի եւ Վաչիկ Հայրապետեանի գնահատագրեր յանձնւեցին ուսուցչի կոչումը կրող Շերկաներին:



Այնուհետև Թեմական խորհրդի անունից կազմի ատենապետ Նոէլ Մինասեանը շնորհաւորանքներ փոխանցելով օրուայ առթիւ եւ 2015 թականի Ամանորի կապակցութեամբ՝ բոլորին մաղթեց առողջութիւն, նորանոր յաջողութիւններ եւ ծառայութեան մեծ հնարաւորութիւն: Պիճ. Մինասեանն իր խօսքում յայստարաբելով, որ հայ մշակոյթի հանրահոչակման եւ հայապահպանութեան զարգացման գործում ունեցած գգալի աւանդի համար՝ Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարի կողմից պատուգրի է արժանացել հայոց ազգ. «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի փոխտեսուց եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոռուն» համոյթի գեղարվեստական դեկանավար Ռիմա Սիմոնեանը, այդ հապատառիթ իրադարձութեան կապակցութեամբ շնորհաւորեց տկն. Սիմոնեանին եւ պատուգիրը յանձնեց նրան, որից յետոյ պատուգրի արժանացած ուսուցչութիւն հանդէս եկաւ շնորհակալական խօսքով ուղեւած ՀՀ մշակոյթի նախարարութեանը, թեմի ազգային իշխանութեանը, իր ընտանիքին եւ կրթական ու մշակութային աշխատանքներում իրեն աշակցողներին:

Միջոցառումը եզրափակւեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արքեպոս. Զարեանի հայրական օրինանորով: Նա իր խօսքի սկզբնական բաժնում աղօթելով առ բարձրեալն Աստուած հանգուցեալ Անահիտ Կիրակոսեանի եւ մեզանից առյաւտ բաժանած բոլոր ուսուցիչ-ուիինների հոգիների խաղաղութեան համար, իր եւ թեմի ազգային իշխանութեան անունից գնահատանքի խօսք ուղեց հանգստի կոչուած եւ աշխատող հայ ուսուցիչներին իրենց կատարած նիդրական աշխատանքի կապակցութեամբ, իսկ պատուգրի ստանալու համար շնորհաւորանքի խօսք ասաց Ռիմա Սիմոնեանին:



Թեմակալ առաջնորդն իր արտայալութիւնների շարունակութեան մէջ նշելով, որ սփիտքեան պայմաններում հայ ուսուցչի առաքելութիւնն առաւել նիդրական է սերունդներ դաստիարակելու առումով, կրթական մշակներին յորդորեց վերազինել գիտութեամբ եւ հայ նոր սերնդին ներշնչել այնպիսի ոգի, հաւատ ու կամք, որպէսզի ապագայում շարունակելով մեր նախնիների ուղին, մեր արդար իրաւունքների պաշտպանը հանդիսանան եւ հայի ինքնութիւնն ու արժէքները անաղարտ պահեն:

Եղեկոյի աւարտին աւանդոյթի համաձայն կրթահամալիրի բակում բոլորը միասնաբար լուսանկարւեցին, ապա վայելեցին հայոց ազգ. «Արմէն» տարրական կրթահամալիրի Ծնողական խորհրդի կազմակերպած հիւրասիրութիւնը:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԽ ԶԱԻԱԽԱԲԻՆ ՍԻՒՐԻԱԾ ԱՀԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԵՐԿՈՒ ՓԱՌԱՏՈՆԵՐԸ

Հինգշաբթի եւ ուրբաթ, դեկտեմբերի 4-ի եւ 5-ի երեկոյեան ժամը 7-ին, Օախաձեռնութեամբ Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի, Նոր Զուղայի Հայ Մ.Ա. «Արարատ» միութեան սրահում, տեղի ունեցան Զաւախիքն նիրաւած ազգային-յեղափոխական երգերի զոյգ փառատօները: Երկօրեայ այս ծրագրերին ներկայ էին Շահինշահրի հայ համայնքի հիգենուր տեսուչ հոգչ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների, հիգենուրականաց դասի, միութինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ եւ բազմահարիւր հայացաւեան:

Հինգշաբթի երեկոյեան, կայացաւ Զաւախիքն նիրաւած ազգային-յեղափոխական երգերի 2-րդ մանկական փառատօնը, որին մասնակցել էին Նոր Զուղայի հայոց ազգային «ԱրմԷն» տարրական կրթահամալիրի եւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ դասարաններից 17 աշակերտ-ութիններ, իսկ ուրբաթ, ազգային-յեղափոխական երգերի 6-րդ փառատօնը կազմակերպւել էր Թերթանից, Նոր Զուղայի եւ Շահինշահրից 16 տարեկանից վեր 18 երգիշ-երգչութինների մասնակցութեամբ: Փառատօների ընթացքում հնչած ազգային-յեղափոխական երգերը, ոչ միայն ոգեշնչեցին հանդիսաւեսին, այլև բազմապատկեցին նրա խանդավառութիւնը:



Սոյն միջոցառումների հաղորդավարութիւնը վստահած էր Մանիա Ղուկասեանին: Աւանդոյթի համաձայն իւրաքանչիւր օրուայ ծրագրին սկիզբ առաւ Զաւախիքն նիրաւած փառատօների հիմնով՝ հոգչ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանի հեղինակութեամբ, ապա ցուցադրւեց մի տեսահետք Զաւախիք Նինոծմինդա քաղաքի երիտասարդական կրթամշակութային կենտրոնի բացման արարողութիւնից, որի կահաւորման աշխատանքը կատարւել է շրջանի Հայ Դատի յանձնախմբի ստեղծած «Զաւախիք» հիմնադրամի գումարով: Կենտրոնի բացման արարողութեանը Նոր Զուղայի հրաւիրել եւ ներկայ էին՝ Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի պատասխանատու Անդրուիի Զաւահիրեանն ու Ն. Զ. Հայութեանց Բարեգործական ընկերութեան վարչութեան ներկայացուցիչ Լորիկ Բաղդասարեանը: Հարկ է նշել նաև, որ «Զաւախիք» հիմնադրամին է փոխանցուում իւ-

րաքանչիւր տարրայ փառատօնին գուգամին կազմակերպւող նիրաւարքից գոյացած գումարը: Սոյն նիրաւարքին իրենց նիրաւութիւններն են կատարում թեմիս ազգային իշխանութիւնը, միութիւնները, հայոց ազգային դպրոցները եւ ժողովուրդը. Ն.Զ. Հայութեանց Բարեգործական ընկերութիւնն իր ամենամեայ կարգով կազմակերպւող Զաւախիքն նիրաւած դաշտահանդէսի հասոյթը Ծոյնակէս յատկացնում է նշած հիմնադրամին:



Զաւախիքն նիրաւած ազգային-յեղափոխական երգերի 2-րդ մանկական փառատօնի մասնակիցներն էին Նարեկ Հախնազարեանը՝ «Հզօր հայրենիք», Արութին Թորոսեանը՝ «Գետաշէն», Բիլիրա Մինասեանը՝ «Թիկունքը լայն», Արմէն Քեշշեանը՝ «Սարդարապատէն», Անի Ղազարեանը՝ «Խանի երգը», Փիւնիկ Թորոսեանը՝ «Լեռներ հայրենի», Անի Մինասեանը՝ «Դարձեալ փայլեց», Էլենի Զէնալեանը՝ «Դրոյի յիշատակին», Նոյեմի Ղարիբեանը՝ «Հայաստան», Գամեր Թահմազեանը՝ «Զինորի երգը», Նարեկ Փանոսեանը՝ «Հրապը Մարտիսեան», Սէրլի Ղարախանեանը՝ «Հայաստանի ծով գիճին», Անի Սիմոնեանը՝ «Զայն տուր ով ֆերայ», Սեւակ Խսաղովեանը՝ «Ո՛չ, չեն մեռնում ներոսները», Արգիշտի Նազարեանը՝ «Եմ փոքրիկ Հայաստան» եւ Դիին Ցովինակիսեանը՝ «Ընկեր Աբօ» երգերով:

Ուրբաթ, Զաւախիքն նիրաւած ազգային-յեղափոխական երգերի 6-րդ փառատօնի առաջին կատարողն էր 5-րդ մրցոյթ-փառատօնի յաղթող Մարտիկ Յովկիանիսեանը՝ «Քայլ առ, առ առաջ» երգով, որից յետոյ Նոր Զուղայի երիտասարդներից կազմած «Ասուա» նագախումբի նագակցութեամբ ելոյթ

ունեցան. նոյն համայնքի երգիչներ՝ Կարեն Խանլարեանը «Բարի Արագիլ», Դրո Տէր Մարտիրոսեանը ընկերակցութեամբ Փարելի Թահմազեանի «Armenia», Վեհանուշ Խուդաբախշեանը եւ Փարելի Թահմազեանը «Խելագարած մտքեր» եւ Դրո Տէր Մարտիրոսեանն ու Փարելի Թահմազեանը «Հայրենիք» երգերով:



Փառատօնը շարունակեց հետեւալ կատարումներով. Արեգա Յարութիւնեան՝ «Լիսրոնի երգը», Արգին Շահմիրզայեան՝ «Ղարաբաղին», Վաչէ Ղարիբեան՝ «Գիմի լից», Արգամ Նազարեան՝ «Հրանդ Դինք», Նարէ Պողոսեան, Շահակցութեամբ Անդրէ Խաչիկեանի՝ «Երեւան», Շանթ Թահմազեան՝ «Զօրավար», Վանա Շմատունեան՝ «Հայ ժողովրդին», Շաքէ Մովսիսեան, Շափակցութեամբ Րաֆֆի Խուդաբախշեանի՝ «Վեր կաց եղբայր իմ», Արութին Հայնազարեան՝ «Օսմանական գոռ վաշտերը», Եօլանդ Մանսուրեան, Շափակցութեամբ Րաֆֆի Խուդաբախշեանի՝ «Իմ Անի», Անդրէ Խաչատրեան՝ «Մասիսին», Անասիկ Ցովսէփեան՝ «Թաթով Կրպէյեան», Վանա Շիրանեան՝ «Հայաստան»:

Իւրաքանչիւր երեկոյի աւարտին հոգջ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի, շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչ պրո. Աշոտ Դալեւեանի եւ «Արձագանք» քարոզչական յանձնախմբի պատասխանատու տկն. Անդրուին Զաւահիրեանի միջոցով յուշանէրներ յանձնեցին մասնակիցներին, իսկ գնահատագրեր՝ փառատօնների կազմակերպման գործում յանձնախմբին օժանդակած միութիւններին ու անհատներին:

Իսկ որպէս փակման խօսք ներկաներին իր պատգամը փոխան-

ցեց հոգջ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, ով գնահատելով կազմակերպիչների կատարած աշխատանքը եւ ընդգծելով այն հանգամանքը, որ ծրագիրը եզակի է եւ միևնույն համայնքներում նման միջոցառում տեղի չի ունենում, Զաւահիրն նկրած փառատօնը գնահատեց, որպէս դպրոց, ուր մասնակիցները սովորում են դասեր:



Հոգջ. Հայր Սուրբը շեշտելով, որ հարկադր է շարունակել աւանդոյթ դարձած սոյն միջոցառումը, գնահատանքի խօսք ուղղեց նաեւ բոլոր երգիչներին, ովքեր իրենց մասնակցութեամբ նոյնպէս իրենց լուման են ներդրել այս գործում:

Այս տարի եւս միջոցառումներին զուգահեռ կազմակերպել էր նկրահաւաք, յօգուտ «Զաւախը» հիմնադրամի:



Ե՞ս Անդրեան պատրիարք Եղիշեական կամաց պահանջման վեհական գործությունը՝ հայոց ազգային կրթահամալիրի կենտրոնական սրբառում, մեկնարկը տրտեց «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների ամենամեալ գորքի ցուցահանդէս-վաճառքի, որն այս տարի նիրակարակութեան 100-ամեակին: Ցուցահանդէս-վաճառքի բացման արարողութեանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բարգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ ու համայնքի անդամներ:

Սոյն ցուցահանդէսը, որի կազմակերպման գործում ինչպէս միշտ իրենց աշխոյժ մասնակցութիւնն էին ցուցաբերել զոյգ դպրոցների տեսչութիւնները, ուսուցական կազմերն ու ծնողական խորհուրդները, բացւած յայտարարւեց աշակերտութիւն Նարէ Վարդանեանի խօսքով, ուր անդրադարձել էր գորքի եւ ընթերցանութեան կարեւորութեանը, այնուհետեւ ներկաներին

առիթ ընձեռւեց շրջելով դահլիճում, մօտկից ծանօթանալ ըստ թեմայի եւ տարիքային խմբաւորման առաջնացած կրպակներում ցուցադրւած գործերին:

Ընթացքում տեղի ունեցաւ նաև գրքի ծանօթացում, որտեղ նախ ուսուցչուին Քառուին Դիլանչեանը ներկաներին ծանօթացրեց իտալացի, սակայն ծագումով հայ՝ Անտոնիա Արաւանի գրչին պատկանող «Արտոյուների ագարակը» գիրքը, որտեղ հեղինակը գրի է առել Հայոց Յեղասապանութեան թեմայով մի եղերական պատմութիւն, ապա անգլերէն լեզվի դասաւոր Սեւան Ղազարեանն արտայալութեց իր հեղինակած անգլերէն դասագրքերի եւ դրանց տարբեր մակարդակների համար նախատեսած հատորների մասին: Իսկ վերջում խմբավար եւ դաշնակահար Համիկ Ալեքսանդրեանը ներկաներին ծանօթացրեց իր մշակած «Կապոյս երկինք» խորագրով երաժշտութեան գիրքը, ուր տեղ են գտել խմբավարի միջոցով վերամշակած երաժշտութիւններ՝ իրանի տարիների փոփ երգիչների երգերից:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑՈՒՄ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԻ Յ-ՐԴ ԳԻՏԱԿԱՆ ԾԱՄԲԱՐԸ

Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջկանց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան եւ տարրալուծարանի պատասխանատու Սիւնէ Միջնասեանի համատեղ նախաձեռնութեամբ, շորեքարթի, դեկտեմբերի 3-ի առաօտեան ժամը 8:30-ից, դպրոցի միջնակարգի օղակի աշակերտութեան մասնակցութեամբ կայացաւ ֆիզիկայի եւ քիմիայի 3-րդ գիտական ճամբարը, որին ներկայ էին նաև դպրոցի պատասխանատուներն ու աշակերտների ծնողները:



Սոյն գիտական ճամբարը, որն այս տարի կրում էր «Գիտութեան ծիածան» խորագիրը, բացւած յայտարարեց տարրալուծարանի պատասխանատու Սիւնէ Միջնասեանի ողջոյնի խօսքով, որից յետոյ նա ներկաներին ծանօթացրեց ծրագրով տեղ գտած գիտական փորձարկումներին՝ ընտրած աշակերտների դասագրքերի հետազոտութիւններից եւ նոյն թեմաների առջնութեամբ մի շարք այլ փորձարկումներից:

Այնուհետեւ միջնակարգի առաջին դասարանի աշակերտները խմբերի բաժանելով՝ ստացան համապատասխան տարրալուծարանային իրեր եւ նիւթեր, որից յետոյ՝ գրաղեցին իրենց համար նախատեսած փորձարկումներով, ուսուցչութիւններ՝ Սիւնէ Միջնասեանի եւ տկն. Հարաթեանի վերահսկողութեամբ, իսկ դարձնում ներկաները հնարաւորութիւն ունեցան մօսենալու եւ լսելու աշակերտների բացատրութիւնները։ Յատկանշական է, որ այս տարի գեղեցիկ մտայլացմամբ ծնողներին եւս առիթ էր ընձեռուել իրագործելու մի շարք փորձարկումներ, իրենց համար նախատեսած կրպակում։

Ծրագրի առաջին բաժնի աւարտին ներկաներն անցնելով կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճ, ունկնդրեցին ֆիզիկայի եւ քիմիայի աշակերտական գիտական խմբակների անդամների միջոցով կատարած ուսումնասիրութիւնների արդինքների մասին, որոնք առաւել դիւրմբումնելի էին դարձել փարլիումիթի

միջոցով պատասխի վրայ ցուցադրող պատկերներով։ Այս շրջագծում գեկուցաբեր աշակերտներն էին Թամանա Միջնասեանը, Վանէ Շահնազարեանը, Նազէ Ասատրեանը, Նարէ Վարդանեանը, Վանէ Թահմազեանը, Արփա Մարգարեանը եւ Անայիս Խուտավերդեանը։ Դպրոցի աշակերտական գիտական խմբակներն առաջացել են երկու տարի առաջ եւ ուսուցիչների վերահսկողութեամբ ու յանձնարարութեամբ կատարում են դասագրքերից դուրս թեմաների շուրջ ուսումնասիրութիւններ՝ քիմիայի եւ ֆիզիկայի տարբեր երեւյթների շուրջ։



Ծրագրի այս բաժնի աւարտին դպրոցի տեսչունի տկն. Սալահիֆարն իր գոհունակութիւնն յայտնելով աշակերտների ուսումնասիրութիւնների կապակցութեամբ, շնորհակալական խօսք ուղղեց ուսուցչութիւններ՝ Սիւնէ Միջնասեանին եւ տկն. Հարաթեանին՝ իրենց կատարած աշխատների համար եւ ասաց, որ նման գիտական ճամբարներ անգամ Սպահան նախանգի լաւագոյն դպրոցներում գոյութիւն չունեն եւ «Քանանեան» դպրոցն այս առումով եւս եղել է առաջընթաց ուսումնարաններից։



Տեսչունի խօսքին յաջորդեց մի հաճելի մրցոյթ քիմիայի թեմայով՝ ծնողների եւ աշակերտների մասնակցութեամբ։ Այնուհետեւ բոլորը դարձեալ տեղափոխւցին դպրոցի կենտրոնական սրահ, ուր գիտական ճամբարը շարունակեց այս անգամ միջնակարգի երկրորդ եւ երրորդ դասարանների աշակերտների մասնակցութեամբ։

ՅԱՆԴՈՉՈՒՅՑԾԻ ՃՅԱՅ ՀԱՅՈՒԱ ՀԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ
ՅՈՉՈՒՅՑԾԻ ՃՅԱՅ ՀԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ
ՃՅԱՅ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ
ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ

Նոր Զուղայի «Կատարինեան» ուղեցոյց եւ միջնակարգ տղայոց դպրոցի Տեսչութեան եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի՝ թականին նոյեմբերի 13-ին, կազմակերպել էր միօրեայ արշաւ: Դէայ Ծիր Կաթի՞ն: Այո՛. արշաւի նապատակը եւ աստղագիտութեան հետ իբրեւ գիտութեան ծանօթանալն էր, եւ մեր Երկիր մոլորակի հարեւան աստղերի հետ «ակն ընտ ական» հանդիպելը՝ թէկուզ կարճ ժամանակով համարեա անջատւելով արդի տեխնոլոգիայի եւ համակարգչային, ինտերնետային ու բջջային կապերի աշխարհից:



Վաղանէ քաղաքի համանուն անապատ հասնելու ճանապարհին, որտեղ էլ պէտք է ընթանային աշակերտութեան «աստղագիտական հետազոտութիւններ», դպրոցի արշաւախումբն այցելեց մի հինաւորց ջրհոր, որ պարսկերենով հնչում է այսպէս՝ «Գալ չահ», նոյն է՝ «Եզան հոր» եւ ծանօթացաւ տեղացիների՝ գետնի խորքից ջուր հանելու մի աւանդական եղանակի հետ:



Յաջորդ կայանը Վաղանէի անապատն էր՝ շրջապատած աւազաբլուրներով, որոնք, հարկաւ, պէտք է մագլցէին տղաները՝ «իւրովի ուսումնասիրելու տարածքը»: Այնուինեւել ինդրով աւազագնայ մեքնեաներով պտոյտի գնալունն էր. մի հսկական տղայական զւարձալի ուղեւորութիւն, որ մեծ ոգեւորութիւն պատճառեց աշակերտներին:

Մայրամուտին խարոյիկի շուրջ հաւաքւած արշաւախումբն ազգային-հայրենասիրական երգերով եւ գլարձակի զրոյցներով համեմած մի համեստ խրախճանքով սպասեց աստղաբոյլի յայտնելուն:

Դպրոցի Տեսչութեան հրաւերով արշաւախմբին, իր ուղեւորութեան ամբողջ ընթացքում, ուղեկցում էր աստղագիտութեան մի երիտասարդ մասնագէտ, ով էլ իր հետ բերել էր մի աստղադիտակ: Նրա օգնութեամբ եւ ուղղորդմամբ գիշերայ տարբեր ժամերին աշակերտները դիտեցին տարբեր աստղեր եւ համաստեղութիւններ, ծանօթացան Երկիր մոլորակի հարեւան լուսատուների հետ, ճանաչեցին «Ծիր կաթինը»՝ նոյն «Յարդագողի ճանապարհը», որով, մի առասպելի համաձայն՝ անցել է իրենց նախահայր Վահագն չաստածը:

ՏԻ ԾՆՅԱԷ! ՀԵ-ԹԾՅԱՅԱ Ա. ՋՅԱՅԱ
ՀԵ-ՅԱՅՈՒԱ ԾԻ ՀԵ-ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ
ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ ՅԱՅՈՒԱ

Ժամաթ, նոյեմբերի 29-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տեսչութիւնը եւ Ծնողական խորհրդող՝ նոյն դպրոցի մշակութային աշխատանքների պատասխանատու եւ հայերէն առարկաների ուսուցչուի Սօսէ Պօղոսեանի նախաձեռնութեամբ եւ գլխաւորութեամբ Տ. Վազգէն քին: Քէօշկէրեանի, եօթերորդ դասարանի աշակերտների համար կազմակերպել էր կրօնի բաց դասմրցոյթ: Ծրագրին որպէս հանդիսատես հրաւիրել էին սյուն դասարանի աշակերտների ծնողները, որն իրենց ներկայութեամբ լաւագոյնս խրախուսեցին եւ ոգեշնչեցին մասնակիցներին:



Աշակերտները բաժանել էին երեք խմբերի եւ խմբերն անաւել Հայաստանի եռագոյնի երեք գոյներով: Ծրագրի ամբողջ ընթացքում իւրաքանչիւր խմբի



անդամները խորհրդակցելով միմեանց հետ՝ պատասխանում էին իրենց ուղղած կրօնի հարցերին:

Գնահատականների ամփոփումից յետոյ մրցովքի յաղթողը ճանաչւեց «Կարմիր» խումբը, որի անդամները Քահանայ Հօր ձեռամբ ստացան օրուայ մրցանակը՝ Թեմի Կրօնական խորհրդի կողմից նկատի առնաւած «Նոր Կտակարան» գրքերը:

Հարկ է նշել նաև, որ իրաքանչիւր հարցի շրջագծում աշակերտների տιած պատասխանից յետոյ, հոգեւորականի միջոցով առակների եւ օրինակների մէջբերմամբ տրուում էր լրացուցիչ բացատրութիւն, որը ոչ միայն առաւել հարստացնում էր մասնակիցների գիտելիքները, այլև ոգեւորում նրանց:

Միջոցառման աւարտին տեղի ունեցաւ հիմասիրութիւն՝ դպրոցի Ծնողական խորհրդի կազմակերպութեամբ:

§ԱՅ ԹՀԻ ՕՀԻ ԾՀԾԻ ԱՕԱԷԾՈՒ ԱԷՇԾԵ ՕԱՋԸ ԾԱՋԸ ԱՋԸ ԱՋԸ ԱՋԸ ԱՋԸ ԱՋԸ ԱՋԸ §Ի ՀԻ ՀԱՋԸ ՀԱՋԸ ՀԱՋԸ ՀԱՋԸ ՀԱՋԸ ՀԱՋԸ ՀԱՋԸ

Նոր Զուղայի հայոց ագօային «Կատարինեան» տղայոց ուղեցույց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան եւ Ծնողական խորհրդի համատեղ նախաձեռնութեամբ, շաբաթ, դեկտեմբերի 6-ի կեսօրից յետոյ ժամը 1-ին, հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում կազմակերպիւ էր ֆիլմի ցուցադրութիւն, ուր դպրոցի ամբողջ աշակերտութեան ներկայութեամբ էկրանի վրայ ցուցադրութեց հայ երիտասարդ ուժիսոր Զիւան Աւետիսեանի «Ընդհատած մանկութիւն» ֆիլմը:



Մինչեւ ֆիլմի դիտումը «Կատարինեան» դպրոցի հայերէն առարկաների ուսուցչուին եւ մշակութային աշխատանքների պատասխանատու Սուէ Պօղոսեանը, նշեց, որ դպրոցի տեսչութիւնը եւ Ծնողական խորհրդը ձեռնամուխ լինելով մի շարք մշակութային-դաստիարակչական լուրջ աշխատանքների՝ նպատակ ունեն դպրոցի աշակերտութեանն առաւել հաղորդ դարձնելու հայ ժողովորի անցեալին եւ ներկայի իրականութեանը: Նա աւելացրեց նաև, որ նոյն ծրագրերի շարքում նախատեսել են պատմական, վաւերագրական եւ կարեւոր նշանակութիւն ունեցող ֆիլմերի ցուցադրում ու վերլուծում, որն ուսուցողական եւ դաստիարակչական մեծ արդիւնք կարող է արձանագրել: Այնուհետեւ ուսուցչուին ընթիւնուր գծերով ներկայացրեց ֆիլմի բովանդակութիւնը եւ նկարհանման նպատակները՝ մէջբերումներ կատարելով մամուլում ուժիսոր դպրոցի տիած հարցազրոյցներից:



Ֆիլմը, որտեղ նկարագրւել են Մարաղայում ադրբեջանցիների իրականացրած ջարդերը եւ փոքրիկ հայ աղջկայ՝ Լենայի, իրական պատմությունը, ով փրկելով շարդից գերի է ընկնում եւ ի վերջոյ 129 օր ապրելով ադրբեջանցի մի ծեր կնոջ տանը, վերադարձում է հայկական կողմին, մեծ հետաքրքրութիւն եւ յուզմունք առաջացրեց հանդիսատեսի մօտ:

**«ՔԱՆԱԿԱՆ» ԱՂՋԿԱՆՑ ԵԽ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ»
ՏՂԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱԽԱՐՏԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԵԽ ՎԿԱՅԱԿԱՆԱԲԱՇԽՈՒՄԸ**



Ուրբաթ, 26 դեկտեմբերի երեկոյեան, նոր Զուլայի հայոց ազգ Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, նախաձեռնութեամբ «Քանանեան» աղջ. ու «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների տեսչութիւնների եւ ուսուցչական կազմերի տեղի ունեցաւ 2013-14 ուսումնական տարեշրջանի շրջանաւարտների աւարտական հանդիսութիւնը: Միջոցառմանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն արքեպո. Չարեանը, գերշ. Տ. Վարուժան արքեպո. Հերկէլեանը, Շահինշահրի հայ համապնդի հոգեւոր տեսուչ հոգած. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները, շրջանաւարտների ծնողները եւ հիւրեր:

Երեկոն, որն իր զարդարանքով ամանորեայ տօնական մթնոլորտ էր ստեղծել, բացաւած յայտարարեց զոյտ դպրոցների գրադարանավարուիրի Կարին Տէր Մարտիրոսեանի հանդիսավարութեամբ, ով ողջունելով ներկաներին, անդրադարձաւ հայ դպրոցի դերին՝ նշելով նրա ագրեցութիւնը հայ մարդու եւ յատկապէս հայ աշակերտի կեանքում: Բացման խօսքից յետոյ հանդիսատեսի բուռն ծափողջոյների ներքոյ դահլիճ հրահրւեցին շրջանաւարտները:



Այնուհետեւ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի խօսքն ընթերցւեց նոյն խորհրդի անդամ Սաթօ Աւետումեանի միջոցով, ով անդրադառնալով հայ դպրոցի դերակատրութեանը նոր սերնդին հայեցի դաստիարակութիւն տալու գործում, յորդորեց շրջանաւարտներին՝ աշխատել չանափրաբար ու մասնագիտանալ գիտութեան

աշխարհում եւ իրենց իմացածը փոխանցել ու տարածել ուրիշներին: Խօսքում ասած էր. «Ապագայում որտեղ էլ, որ մինչք եւ ինչ կրթութիւն ու մասնագիտութիւն էլ որ ստանաք, չմոռանա՞ք այն ծառայեցնել հայ ժողովրդին եւ նրա ընդհանրական շահերին»:



Այնուհետեւ շրջանաւարտները բեմ բարձրացան: Ակզրում Արգամ Թորոսեանն ու Օդելիա Տէր Սուլիքասեանն ընթերցեցին աշակերտական խօսքը, որից յետոյ Անի եւ Արփի Ակոններն արտայացուեցին հայ դպրոցի հանդէպ իրենց գգացմունքների մասին:

Ցաջորդի Պարոյր Սեւակի գրչին պատկանող «Եռաձայն պատարագ»-ը ասմունքեցին Անդրիա Խաչարեանը, Միրո Ղազարեանը եւ Մենուա Ցովսէփեանը, որի ընթացքում «Ով հայ» եւ «Հայաստան աշխարհ» երգերով հանդէս եկաւ Վանայ Շիրանեանը, իսկ «Հայաստան» երգը միասնաբար կատարեցին շրջանաւարտները:

Սիլիա Կապուտիկեանի «Երդում եմ» բանաստեղծութիւնն արտասանեցին Մեղմիկ Ղազարեանը եւ Ալեքս Աբդալեանը, որին միաձայնութեամբ հաստատում տեցին բոլոր շրջանաւարտները «Երդում եմ» խօսքով:

Այնուհետեւ «Վերջին զանգ» երգը շրջանաւարտները կատարեցին յուզած եւ արցունքու աչքերով, որից յետոյ տեղի ունեցաւ մի գեղեցիկ անակնկալ, որտեղ «Քանանեան» աղջ. դպրոցի միջնակարգ 3-րդ դասարանի աշակերտութիւնները կարկանդակով ու ծաղկներով սրահ մուտք գործեցին՝ հրաժեշտ տալու շրջանաւարտներին: Պահը յուզիչ էր եւ մինենյն ժամանակ հաճելի թէ շրջանաւարտների եւ թէ նրանց ծնողների ու ուսուցիչների համար:

Շարունակութիւնը՝ 33-րդ էջում

ՆՈՐ ԶՈՒՄԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՋԻՇԽ - ԱԼԻՆԱԿՈԹԱՐԱՆԻ ԱՄԱՆՄՈՒՏԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Կիրակի՝ դեկտեմբերի 28-ի երեկոն և նույն օրը համար Հայ Ա. Ա. «Արարատ» միութեան սրահում, նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան եւ ուսուցչական կազմի համատեղ նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ դպրոցի ամենամեայ ամանորեայ հանդէսը, որին որպէս հանդիսատես ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բարգէն արքեպոս. Զարեանը, ազգային մարմինների եւ դպրոցների ներկայացուցիչներն ու սաների հարազատները:



Սկզբում բացման խօսքով ելոյթ ունեցաւ դպրոցի տեսչութիւն Քառողին Ռիխանչեանը, ով իր եւ դպրոցի անձնակազմի անունից շնորհաւորելով Ամանորը, մաղթեց, որ 2015 թականը հայ ազգի համար լինի պահանջների հատուցման տարի, բոլորին ցանկացաւ երջանկութիւն ու յաջողութիւն, իսկ մանուկներին՝ մաքուր երազանքների իրականացում:

Տեսչունու խօսքին յաջորդեցին երեխաների ներկայացումները, որոնք ոչ միայն յագեցած էին անմիջական եւ անկեղծ խօսքերով, երգերով ու պարային շարժումներով, այլև բարոյական պատգամներով ու ամսանորեայ մաղթանքներով, ինչի համար կատարողներն արժանացան հանդիսատեսի բուռն ծափող-ջոյներին ու գնահատանքին:

Որպէս առաջին արար՝ մանկապարտէզի մեծ ու փոքր խմբակների սաների կատարմամբ, աւանդական պարերի, տարազների ու արտասանութիւնների միջոցով առանձնաբար ներկայացնեցին Անգլիա, Չինաստան, Խավանիա եւ Հայաստան երկրների ժողովորդը, յատկապէս նշելով, թէ ինչպէս են պատրաստում դիմաւորել Զմեո պապիկին եւ նոր

տարին, իսկ իւրաքանչիւր երկիր այցելող Զմեո պապիկներն ու Զիւնանուշիկները գեղեցիկ եւ իմաստալից պատգամներ փոխանցեցին ժողովրդին: Փոքրիկներն իրենց ներկայացմամբ, որը ողողած էր նաեւ տօնական խմբական երգերով ու ասումնեներով, պատգամնեցին, թէ մեծ ու լաւ նւյոներ ստանալուց եւ իրենց մանկական մաքուր երազանքների իրականացումից բացի, ցանկանում են աշխարհում լինի խաղաղութիւն եւ, որ բոլորն ապրեն առողջ ու երջանիկ:



Մանկապարտէզի ներկայացմանը յաջորդեց նախակրթարանի աշակերտների ծրագիրը, որը նոյնպէս յագեցած էր բարոյական խրատներով, գեղեցիկ երգերով ու շարժումներով: Սկզբում երեխաները ցոյց տալով, որ չեն կարողանում ֆուտբոլ խաղալ աղբակյուտով ծածկած բակում, շրջապատը մաքուր պահելու պատգամը փոխանցեցին բոլորին: Այնուհետեւ բակը մաքրելու յէտոյ, նրանք երկու խմբերի բաժանեցին եւ մեկնարկեց մի ֆուտբոլային մրցոյթ, որը ոչընչով չէր զիշում իրական մրցոյթին, քանի որ կային իրաւարար, դարպասներ, գնդակ եւ ի հարկէ խրախուսող ֆուտբոլասէր հանդիսատես:



Մրցոյթն աւարտւելով, այս անգամ սաները ներկայացրին երեխաներ, ովքեր ցանկանում էին խաղալ սենեակում, սակայն նրանցից մի խումբը նախընտրում էր խաղալ աւանդական խաղալիքներով, իսկ միւս խումբը՝ համակարգչային խաղերով: Ի վերջոյ երբ պատահար անշատում է հենկուրահոսանքը եւ համակարգիչները դադարում են աշխատել, արդիական խաղերով զբաղւող մանուկները հաս-

կանում են ինչքան էլ աշխարհը զարգանայ միեւնոյնն է, ոչինչը չի կարող փոխարինել մանկական գեղեցիկ, պարզ ու գունագեղ աւանդական խաղալիքներից:

Յատկանշական է, որ իրաքանչիւր արարի աւարտին Զմեռ պապիկն այցելեց սաներին եւ գնահատելով նրանց կատարումները, փոխանցեց ամանորեայ մաղթանքներ ու նիրեց գունագեղ մրգեր:

Միջոցառումը եզրափակեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արքեպոս. Զարեանի հայրական պատգամով: Սրբազն Հայոն սկզբում բնաբան ունենալով «Կաթնակեր երեխայի բերանով իմացեք ճշմարտութիւնը» Աստւածաշնչեան խօսքը, ասաց, որ այսօր մենք մանկապարտէզ-նախակրթարանի փոքրիկների բերանով լսեցինք նոր տարιայ գեղեցիկ աւետումն ու պատգամը:

Այնուհետև առաջնորդ Սրբազն Հայոը գնահատանքի խօսք ուղղելով



մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեանը, ուսուցչական կազմին եւ ծնողական խորիրին՝ ձեռնարկի իրականացման ուղղութեամբ կատարած ջանադիր աշխատանքի կապակցութեամբ եւ յատուկ գնահատելով դպրոցի սաներին՝ իրենց գեղեցիկ կատարումների համար, շնորհաւորեց Ամանորը եւ ցանկացաւ, որ մանուկների դեմքերի ժամանութեամբ վերանորոգեն մեր կամքը եւ զինեն բոլորիս, որպէսզի միակամ կեցածքով 2015 թականը հայ ժողովորդի համար դարձնենք արդարութեան յաղթանակի տարի:

ՀԱՅՈՒՄ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ՆԾԻԵՑ Հ.Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 124-ԱՄԵԱԿԸ

2014 թականի նոյեմբերի 26-ի երեկոյեան ժամը 7:30-ին, նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, հանդիսաւոր տօնակատարութեամբ նշեց Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրման 124-ամեակը, նախաձեռնութեամբ շրջանի Հայ դատի «Արձագանք» բարոզչական յանձնախմբի:



Տօնակատարութեան մեկնարկը տրւեց Հ.Յ. Դ. «Մշակ բանոր» քայլերգի յոտընկայս ունկնդրութեամբ: Ծրագրի հաղորդավար՝ Մանիա Ղուկասեանը, բացման խօսքն ընթերցելուց յետոյ, բեմ հրափրեց օրիայ բանախօսներ՝ Հ.Յ.Դ. շրջանի կազմակերպութեան

տարբեր կառոյցների ներկայացուցիչներ՝ «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան անդամ Լուսին Միհնասեանին, «Ռուլէն» երիտասարդական միութիւնից Լալագէ Խաղովունին եւ տարիների կուսակցական ու ազգային գործիչ Վրէժ Շիրանեանին:



Ծրագրի երկրորդ բաժնում յեղափոխական երգերի կատարմամբ ներկաներին ոգեշնչեցին համայնքին երգիչներ՝ Արթին Քեշիշեանն ու Շաֆֆի Խուդախմբի:

Միջոցառուման աւարտին թեմիս թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը հանդէս եկա փակման խօսքով:

**ՆԻԿՈԼԴՈՒՄԱՆԻ ՄԱՆԴԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻԿՈԼԱՅԾ ՅՈՒՇԵՐԵԿՈՅ՝
«ԹԱԴԷՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ**

«Թադէոս Թադէոսեան» պատամեկան միութեան նախաձեռնութեամբ, հինգշաբթի, դեկտեմբերի 11-ի երեկոյեան, նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ յուշերկոյ՝ նիկոլած խիզախ մարտիկ, ազգային գործիչ եւ մտաւորական դաշնակցական նիկոլ Դումանի մահան 100-ամեակին:



Միջոցառմանը, որն ամբողջովին իրագործել էր պատամեկան միութեան անդամ-ութիների միջոցով, ներկայ էին՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգած. Տ. Անանիա Վլոդ. Գումանեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի անդամները, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ագզային դպրոցների ներկայացուցիչները, «Թադէոս Թադէոսեան» պատամեկան միութեան անդամներն ու հոծ թուվ ժողովուրդ:



Ծրագիրը բացւած յայտարարւեց «Թադէոս Թադէոսեան» պատամեկան միութեան վարչութեան խօսքով, որն ընթերցեց նոյն մարմնի անդամ Էջմիճն Խաչիկեանը: Խօսքում ասւած էր. ««Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութիւնը վերջին տարիներին, խոսնարհ ու անձնագոհ հերոսների նւիրւած ձեռնարկներ ու միջոցառումներ կազմակերպելով նպատակ է ունեցել՝ իր յարգանքի տուրքը մատուցելու նրանց անթառամ յիշատակին եւ ժողովրդին ու յատկապէս նոր

սերնդին առաւել ծանօթացնելու նրանց գործունէութեանն ու վեհ գաղափարներին: Եւ այսօր պատանեկան միութեան անդամներս, մեր ուխտը վերանորոգելով անմահ հերոսների հետ՝ խոստանում ենք՝ հետեւել նրանց օրինակին, մեր սրտերում վառ պահել նրանց վսեմ գաղափարները, լինել նրանց կերտած ձանապահի անձնագոհ ու արիասիրտ զինւորները եւ ի վերջոյ գործել այնպէս, որպէսզի արժանի լինենք նրանց զաւակներն ու յետնորդները կոչւելուն»:

Այնուհետեւ օրւայ հաղորդավար նազելի Ղարիբեանը ողջոյնի խօսք ուղղելով ներկաներին, նիկոլ Դումանի մասին այսպէս արտայալութեց. «Նիկոլը սնափառ չէր: Նա սիրում էր գործել լուռ եւ գաղտնի: Նա ճառել չէր սիրում եւ չպէտք է զարմանալ, որ Հ.Յ.Դաշնակցութեան վաստակաւոր մարտիկին քչերն են ճանաչում: Խիստ գաղտնապահ եւ խորհրդաւոր այդ մարդը, չէր սիրում խօսել իր արածների եւ խիզախ ընդգումների մասին, եւ շատ քչերին, այն էլ ամենամտերիմ ընկերների մօտ էր երբեմն բաց անում իր սրտի խորքերը»:



Հաղորդավարի խօսքին յաջորդեց օրւայ բանախօսական ելոյթը, որն իրականացւեց Արինէ Խսաղովեանի ու Արմին Մինասեանի միջոցով, ովքեր ներկայացրին Դումանի կեանքի կարեւորագոյն դրւագները՝ հերոսին առաւել ծանօթացնելով որպէս բարյական սկզբունքներով մարդ, քաջարի զինւոր ու հրամանատար եւ ազգային ու կուսակցական գործիչ:

Ահա մէջբերում ենք բանախօսութիւնից հատւածներ:

«Խանասորը, որը 1897-ի օգոստոսին եկաւ հայ աշխարհը ցնցելու, պառւղն էր նիկոլի մտքի: Նա էր, որ ծրագրեց այս մեծ ձեռնարկը: Մի տեսակ փոխվրէժ՝ պատժելու համար քիւրդ աշիրէթներին: Երկար տե-

ւեցին պատրաստութիւնները: Խանասորի նախօրեակին Սալմաստում ժողովի նստեցին Փիդայիները՝ իրենց հրամանատարական կազմն ընտրելու: 300 հոգանոց այդ արշաւախմբում կային շատ հայ ականաւոր ռազմիկներ, բայց Դումանը նրա հոգին էր... Դումանի օրինակով խոնարհ, ընկերասէր եւ ժողովրդային մարդր, մտաւորական մեծ պաշարի տէր լինելով եւ հայկական ազատամարտի ռազմավարական ուղղութեան հունաւորման ու մշակման մէջ վճռական խօսք ունենալով հանդերձ, կարող էր կուսակցական պատասխանատու մարմինների անդամակցութիւնից հեռու մնալ եւ ամբողջ ուժերով նւիրւել յեղափոխական-ռազմական կենդանի գործին: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ եթէ ցարական Ռուսաստանը չկարողացաւ ամենուրեք կոտորել յեղափոխականացած հայերին Կովկասի մէջ, այդ միայն Հ. Յ. Դաշնակցութեան կուռ կազմակերպութեան եւ նրա ինքնապաշտպանական խմբերի չնորհւ էր, որոնց շունչ եւ կենդանութիւն տւողն եղաւ հայդուկապետ Դումանը»:



Ծրագրի շարունակութեան մէջ պաստարի վրայ ցուցադրուեց մի տեսանիւթ, որտեղ լուսարձակի տակ էին առնել պատանեկան միութեան Աստրապատականի Գարդարադ քաղաքում կազմակերպած ամառային բանակումի (կայացած 2014 թականի օգոստոսին) աշխատանքները, նպատակ ունենալով ոչ միայն պատանի սերնդին դաստիարակելու եւ որպէս ապագայ դաշնակցական կոփելու, այլև նրանց մօտիկից ծանօթացնելու պատմական Հայաստանի տարածքին, որտեղ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին մեծ նշանակութիւն է ունեցել հայ ազատագրական պայքարում: Տեսանիւթին զուգահեռ Վանէ Յարութիւննեանի եւ Շաֆֆի Դիլանչեանի միջոցով ընցերցւեց սոյն բանակումի չորս օրերի ընթացքում իրականացաւած ուսուցողական աշխատանքների եւ այցելութիւնների գեկոյցը:

Վերջում պատանեկի կատարմամբ բեմադրւեց սուերախաղ, որտեղ անդրադառնալով քաջարի մարտիկի կեանքին, հիմնականում ներկայացւեց Խանասորի արշաւանքից դրագներ՝ ընդգծելով Դումանի որոշի ուրո՞ւ սոյն արշաւանքի իրականացման գործում:

Զեռնարկն առաւել ոգեշնչող դարձաւ «Նիկոլ Դումանի յիշատակին» եւ «Խանասորի հերոսներ» յեղափոխական երգերի միջոցով՝ Շանթ Թահմազեանի մենակատարմամբ:



Որպէս երեկոյի փակման խօսք ներկաներին իր պատգամը փոխանցեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անամիա Վլոդ. Գուճանեանը: Հայր Սուլը բարձր գնահատելով պատանեկներին եւ նրանց պատասխանատուներին՝ յուշերեկոյի կազմակերպման համար, այսպէս շարունակեց «Նման նւիրական հերոսներ մեզ համար փառք ու պարծանք են: Ամեակները կը գան ու կանցնեն, բայց նիկոլ Դումանի ու նիկոլ Դումանների գործերը մեր կանքում հնչելու են եւ օրինակ են հանդիսանալու: Նրանց նմանները միշտ յաղթանակ են դուրս գալու հայ ժողովրդի պատմութեան մէջ»: Նա իր խօսքի աւարտին վստահութիւն յայտնեց, որ այս երեկոյի կազմակերպիչ պատանեկները նիկոլ Դումանի ճամբով եւ հայեացքով վերանորոգելու են հայի կամքը, նկարագիրը եւ յատկապէս հայ կուտելու եւ լինելու պատիւը:

Զեռնարկի աւարտին բոլորը հրահրւեցին դիտելու կազմակերպած ցուցահանդէսը, որտեղ ցուցադրուել էին պատանեկների ստեղծած մանրակերտերն ու միութեան տարբեր տարեշրջանների աշխատանքներից լուսանկարները: Մանրակերտերը ներկայացնում էին Աստրապատականում գտննող այն բոլոր վայրերը, որտեղ պատանեկան միութեան անդամներն այցելել էին իրենց վերջին ամառային բանակումի ընթացքում: Դրանց շարանում յատկապէս ուշագրաւ էին Խանասորի արշաւանքի եւ Ս. Թադէի վանքի մանրակերտերը:

Հարկ է նշել նաեւ, որ պատանեկան միութեան նախաձեռնութեամբ եւ նոր Զուղայի Հայ կանանց գթութեան մեկենասութեամբ հրատարակել էր նիկոլ Դումանի կեանքին ու գործունելութեանը նւիրած գրքոյնը, որը բաժաննեց ներկաների միջեւ:

ՄԻՋԱՇԱԾՈՒՄ

ՆԻՒԹԻԱՆԾ

«ՏԱՐԵՅԱՆԵՐԻ ՏԱՐԻԱՆ»

Հովանատրութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բարգէն եպս. Զարեանի եւ նախաձեռնութեամբ Նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութեան, երեքշաբթի 16 դեկտեմբերի երեկոյեան ժամը 7:30-ին, Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ բանախօսական եւ գեղարևուտական միջոցառում նվիրած «Տարեցների» տարιան, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, գերշ. Տ. Վարուժան արքեպս. հերկէլեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վլոդ. Գումանեանը, քահանայից դասի, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների ու հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի հայ համայնքների անդամներ:



Ծրագրի առաջին բաժնում Հայ Կանանց Գթութեան միութեան անդամութի եւ երեկոյի հաղորդավար Վարսենիկ Օրոշեանը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ նշեց. «Պատիւ ու յարգանք մեր հին սերնդին: Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախօրեակին երախտագիտական խոր զգացումներով ու հաւատարմութեան ոգով յիշում եւ յարգում ենք այն բոլոր տարեցներին, ովքեր գոհ դարձան Ցեղասպանութեա-

նը, ովքեր կերտեցին 1918 թւականի Մայիս 28-ը եւ ովքեր Արցախի ազատամարտում եղան նոր սերնդի կողքին եւ գոհւեցին վասն ազատութեան եւ Հայրենասիրութեան»:

Այնուհետեւ բանախօսական ելոյթով հանդէս եկաւ գերշ. Տ. Վարուժան արքեպս. Հերկէլեանը, ով սկզբում նոյնակէս շնորհաւորեց Տարեցների տարιայ կապակցութեամբ եւ գնահատեց Հայ կանանց գթութեան միութեան միջոցով կազմակերպած տարեցների տարիայ միջոցառումները: Այնուհետեւ նա նշելով, թէ Աստուածաշնչի համաձայն ծերերը տան օրինութիւնն են, աղօթեց, որ նրանց ներկայութիւնը չպակասի:

Տ. Վարուժան արքեպս. Հերկէլեանն իր հայրական խրատներում անդրադառնալով տարեցների ներկայութեան կարեւորութեանը ընտանիքներում եւ նոր սերնդին ուղղած նրանց կտակին՝ այսպէս շարունակեց. «Մենք բոլորս մէկ ընտանիք ենք եւ անջատ չենք միամեանցից: Զաւակն իրաւունք ունի ժառանգելու բոլոր այն բաները ինչ իրեն կտակ է հասել իր ծնողից, սակայն իրաւունք չունի շռայլելու եւ վատնելու այդ բոլորը: Երիտասարդը պէտք է լսի եւ հետեւի իր տարեցին եւ պէտք է լինի զգոյշ: Երիտասարդ ընտանիքը չպէտք է միայն իր շրջակայրով զրադւի, այլ պէտք է իր պարտաւորութիւնը կատարի իր տարեցի նկատմամբ:»

Վերջում Գերաշնորի Սրբազն Հայրն աւելացրեց. «Մեր ժողովրդի կեանքը, ինչպէս բոլոր ժողովուրդներինը, կապւած է սերունդներին: Նոր սերունդները պիտի յաջորդեն հին սերնդին եւ պարասառութիւն պէտք է ունենան հին սերունդներից դասեր քաղելու: Հին սերունդը պարտաւորութիւնին ունի իր օրհնութիւնը տայ նորին՝ որպէս կտակ»:



Ծրագրի երկրորդ բաժնում ներկաներին մատուցեց գեղարևուտական յայտագրով ծրագիր, որտեղ «Արփա» նագախմբի կենդանի երաժշտութեան ներքոյ, հայերէն երգերի կատարմամբ ելոյթ ունեցան համայնքին տաղանդաշատ երգիշունիներ՝ ֆարլին Պողոսեանը, Զարենուշ Աղոյրեանը, Անասիկ Ցովսէփեանը, Շաբէ Մովսիսեանը եւ Սարմէն Շահմիրզայեանը: «Արփա» նագախմբի ղեկա-

Շարունակութիւնը՝ 33-րդ էջում

Ի ՀՅՇՅՈ ՃԱՊՈ ՈԱԾ ԷՇՅԾ ՅԱ Օ ՏԲԱԾԻ ՀՅԱ Ո ԾՊԱ Ե Թ Ա
ՀՅ ՀՅ ՅԱ Ո ՃԵ Յ Ո ԺԵ Հ Յ Ո ՅԵ Յ

«Տարեցների տարուայ» առթիւ եւ 2015 թւականին ընդառաջ, նոր Զուլայի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու Կանանց հոգեւոր լսարանի եւ «Ծուշանիկ» երգչախմբի անդամութիները, արժճ. Տ. Վազգէն քինց. Քէօշկէրեանի ընկերակցութեամբ, 2014 թւականի ընթացքում այցելել են համայնքի տարիքաւոր անձանց, աղօթել եւ առողջութիւն ու երկար կեանք են ցանկացել նրանց:

Խօսում են լուսանկարները...



ԾԱՀԻՒԾԱՀԻ ՀԱՅ ԿԱՆԱՔԵՅ ԵԿԵՂԵՑՎԱՍԻՒՅՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 39-Ամեակը

Երեքաթի, 2014 թւականի նոյեմբերի 18-ի առաւօտեան ժամը 11:30-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրամում, Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւնը նշեց իր հիմնադրման 39-ամեակը՝ ներկայութեամբ համայնքիս հոգեւոր տեսուչ հոգէ. Տ. Անահիա վրո. Գուճանեանի, համայնքի վարչութեան ներկայացուցի եւ միութեան անդամութիւների:

Միութեան նախագահութի՝ տկն. Անահիտ Օհանեանը բարի գալուստ յայտնելով բոլորին՝ հրափրեց նրանց մէկ րոպէ յոտընկայս լուութեամբ յարգեն միութեան հիմնադիր եւ ինչու չէ նաեւ հեռացած բոլոր անդամութիւների յիշատակը, որոնք երկար տարիներ աշխատեցին բուռն սիրով եւ ամենայն նիդրածութեամբ: Այնուհետև ամփոփ կերպով ներկայացրեց միութեան կատարած 39-ամեայ գործունեութիւնը, որը սեղմ գծերով կանդրադառնանք ստորեւ:



Շահինշահրի Կանանց եկեղեցասիրաց միութիւնը հիմնադրւել է 1975 թւականի նոյեմբերի 21-ին մի խումբ կանանց միջոցով՝ որպէս Բարեգործական միութիւն, իսկ հետագային գերշ. Տ. Կորիւն արքեպոս. Պապեանի ձեռամբ կոչել Կանանց եկեղեցասիրաց միութեան անամբ: Իր հիմնադրման օրւանց սկսեալ ամենայն խանդավառութեամբ ձեռնամուխ է եղել ազգային-աւանդական, կրօնական եւ գեղարվեստական ծրագիրների եւ ցուցահանդես- վաճառքների կազմակերպման գեղեցիկ աշխատանքին՝ վայելելով ազգային իշխանութեան հովանաւորութիւնը: Ամենայն բարեխղճութեամբ եւ հետեւողականութեամբ կազմակերպել է հոգեբանական եւ ուսուցողական լսարաններ՝ համայնքի անդամներին հաղորդ պահելով ժամանակի կարեւոր ընթացիկ հարցերին եւ խնդիրներին:

Իր մշտական ներկայութեամբ ունի նաեւ իր ուրոյն դերը համայնքիս եկեղեցու ծիսակատարութիւններին եւ միջոցառումներին՝ կարգաւորելով ամենապարտն ու պատշաճն:

Միութիւնը Ս. Ծննդեան բարեբաստիկ տօների առիթով օժանդակում է համայնքի կարիքաւոր ընտանիքներին, եւ նաեւ ցարդ, ամէն տարի հոգացել է մի սանի կրթաթոշակը: Ժամանակին նիւթական օժանդակութիւն է ցուցաբերել Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի աղէտեալներին եւ տուժածներին, ինչու չէ նաեւ Արցախի ազատամարտիկներին: Միութիւնն իր ամենամեայ լուման է ներդընում կազմակերպող հեռուստամարտաթոնին՝ նիւթական աջակցութիւն ցուցաբերելով՝ ի նպաստ Հայաստանի, Արցախի եւ Զաւախսի բարօրութեան:

Սոյն միութիւնը իր բեղուն գործունեութեան ընթացքում, հարկ եղած դէպում համագործակցել է նաեւ Համայնքային Վարչութեան եւ համայնքում գործող միևն միութիւնների եւ անձնակազմերի հետ:

Միութեան գեկոյցը ներկայացնելուց յատոց, տկն. Օհանեանը հրափրեց Հայր Սուրբին՝ իր հայրական պատգամը փոխանցելու:

Հայր Սուրբը ողջունելով ներկաներին, շնորհաւորեց Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան հիմնադրման 39 ամեակը եւ իր ուրախութիւնն ու գոհունակութիւնն յայտնեց համայնքի ազգային-կրօնական կեանքում, վերոյիշեալ միութեան մշտական ներկայութեան եւ օգտաշատ գործունեութեան համար: Նա բարձր գնահատելով միութեան իրագործած աշխատանքները այսպէս արտապատեց. «Ես վստահ եմ, որ Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան աշխատանքը առաքելութիւն է: Այս միութեան 39 տարիների գործունեութեան բնարանը եղել է՝ հաւատարմութիւն, միասնականութիւն եւ խոնարհութիւն: Հաւատարմութիւն՝ միութեան գործին, միասնականութիւն՝ միասնական աշխատանքի մէջ. միասնականութեան շնորհիւ է, որ կարողացել է 39 տարի գոյատեւի, ուրեմն այս աշխատանքը բռնցքային աշխատանք է եւ հետեւարար յարատեւել է, այստեղ տեսնում ենք սէր, նւիրւածութիւն, հաւատարմութիւն եւ մանաւանդ գիտակցութիւն. գիտակցութիւն՝ միութեան կանոնագրին, միութեան պահպանման, միութեան առաքելութեան: Ահաւասիկ այս յատկութիւնները միաբանում են բոլոր անդամներին եւ կոչում Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն: Մենք միշտ հաւատացել ենք վերոյիշեալ միութեան առաքելութեան: Միութիւնը այս երկար տարիների ընթացքում գոյատեւել է եւ պէտք է դեռ գոյատեւի: Կրկին անգամ շնորհաւորում եմ մաղթելով շատ գեղեցիկ երկար տարիներ, ամբողջ համայնքի անունից շնորհաւորում եմ Ձեզ, մաղթում եմ երկար, երջանիկ առողջ, յաջող տարիներ, թէ՛ միութեան կեանքում, թէ՛ անձնական եւ ընտանեկան կեանքում»:

Այնուհետեւ Համայնքի վարչութեան անունից օրուայ առիթով արտապատեց տկն. Մատիթա Քեշիշեանը: Նա շնորհաւորելով միութեան 39-ամեակը, կարեւորեց միութեան անդամների հաւատա-

դիմ եւ հարազատ մօտեցումը՝ միութենական եւ հաւաքական աշխատանքներին եւ մաղթեց նրանց երկար տարիների յաջողութիւն եւ ոյժ ու կորով:

Այս գեղեցիկ բարեմաղթանքներին յաջորդեց միութեան 39-ամեակի հիմնադրման համեղ կարկանդակի մատուցումը եւ նախատեսած հիւրասիրութիւնը: Տօնական սեղանը ճաշակով զարդարել էր միութեան գեղարւեստական խումբը՝ տկն. Սեղա Բարումեանի յանձնառութեամբ: Կազմակերպւած հանդէսը ճոխացաւ հայկական ուրախ երաժշտութեամբ:

Հանդիսականները խանդավառութեամբ մասնակցեցին նաև կազմակերպւած գիտելիքների մրցոյթին իրենց լաւագոյնը դրսեւրելով: Ցանձնառու անդամութիւնները մտերմիկ մթնոլորտում միասնական ճաշկերոյթը վայելելուց յետով, հրաժեշտ տեսքին միմեանց՝ ապագայ գործունեութեան խոստումնալից հեռանկարով:

Շարունակութիւն՝ 25-րդ էջից

«ՔԱՆԱՆԵԱՆ» ԱՊՁԿԱՆՑ ԵԽ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ՏՂԱՅՅՈՅ...

Գեղարւեստական յայտագրի աւարտին տեղի ունեցաւ վկայականարաշխում, որտեղ ձեռամբ առաջնորդ Սրբազն Հօր, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ պատկան ուսուցիչ-ուժինների, նախ զոյգ դպրոցների երեք լաւագոյն աշակերտ-ուժինների ստացան գնահատագրեր ու ներներ, ապա շրջանաւարտները՝ իրենց վկայականները:

Երեկոն աւարտւեց թեմակալ առաջնորդ Տ. Բարգէն արքեպս. Զարեանի հայրական օրինանքով: Սրբազն Հայրը շրջանաւարտներին նամանեցնելով տօնածառին, որն ունի տարբեր ճիւղեր, զարդեր ու լոյսեր, եւ նրանց պարգետ համարելով իրենց ուսուցիչների, ճնողների, ազգային մարմինների ու պատասխանատունների համար, գնահատանքի խօսք ուղղեց նաև ծնողներին՝ աշակերտներին հայոց դպրոց կրթութեան տալու համար:



Ապա գերշ. Տ. Բարգէն արքեպս. Զարեանն իր խօսքն ուղղելով շրջանաւարտներին կարեւորութեամբ ասաց. «Ռւսումն ինքնանպատակ չէ. ինչ ուսումն եւ հարստութիւն էլ որ ստանաք, դուք պիտի այն արժեւորէք եւ որեւէ ջանք չխնայէք այն ի սպաս դնելու ձեր ժողովրդի կարիքները հոգալու»: Գերշ. Սրբազն Հայրը վերջում շնորհաւորելով շրջանաւարտներին, իրենց ձեռքբերումների ու նաւումների կապակցութեամբ, յորդորեց, որ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի սեմին զինւեն եւ առաւել հարատանան գիտութեամբ՝ ապագայում տարբեր միջավայրերում իրենց խօսքն ասելու եւ հայ ժողովրդի նահատակների տէրն ու պաշտպանը լինելու համար:

Ծրագրից յետով տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների Շնողական խորհուրդների կազմակերպութեամբ:

Շարունակութիւն՝ 30-րդ էջից

ՄԻՋԱՆԱՌՈՒՄ ՆԻՐԻՆԸ «ՏԱՐԵՖՆԵՐԻ ՏԱՐՆԱ»

Վարն էր դկստ. Արքի Բարումեանը, իսկ երաժիշտները՝ Ասպետ Սիմոնեանը, Սարո Ղարախանեանը, Ժիրայր Ղարիբեանը, Էդմոնդ Ղազարեանը, Մինաս Գէորգեանը, Ռաֆֆի Խուդաբախչեանը, Կարէն Օհանեանը եւ Կարէն Խնիկեանը:

Վերջում գեղարւեստական բաժնի կատարողները շնորհակալագրեր ստացան Սրբազն Հօր ձեռամբ:

Ծրագիրն իր աւարտին հասաւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի հայրական օրինանքով: Սրբազն Հայրը գնահատելով Հայ կանանց գրութեան միութեան նախաձեռնութիւնները տարեցների տարաւ առթիւ՝ ուժ ու կրով մաղթեց նրանց իրենց ընտրած աստιածահանոյ գործունեութեան համար եւ աւելացրեց. «Իմ գնահատանքը բոլոր այն երիտասարդներին, որոնք զիտեն յարգել եւ արժեւորել իրենց տարեցներին, մեր տարեցներին: Որպէս հաւատարիմ ժողովուրդ մեր Աստւածաշնչին, մեր հայրերի պատգամին, մեր նահատակների կտակին՝ մենք պարտաւորութիւն ունենք յարգել, յիշել եւ մեծարել մեր տարեցներին: Մենք առաւել գուրգուրանքով եւ առաւել յարգանքով պէտք է վերաբերւենք մեր տարեցների հետ: Տարեցները մեզ տւեցին իրենց լաւագոյն կտակը՝ հաւատարիմ մնալ մեր մշակոյթին, մեր լեզւին, մեր ինքնութեանը եւ մեր հայրենիքին: Մենք մեր տարեցներին հետեւելով պէտք է կերտենք մեր ներկան ու ապագան»:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՑՈՒՅԱՆԳԵՍ-ՎԱՃԱՌՔ ՆԻՒՐԻԱԾ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՍԻ ԴՊՐՈՅԻ ՖՈՆԴԻՆ

Չամինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւնը 2014 թւականի դեկտեմբերի 3-4-ին կազմակերպել էր տօնական վաճառք՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում։ Սոյն ձեռնարկի բացման արարողութեանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի բարեգան առաջնորդ գերշ. Տ. Բարդէն եպս. Չարեանը, Չամինշահրի հոգեւոր տեսուչ հոգք. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Համայնքի վարչութեան ներկայացուցիչը եւ բազմաթիւ այցելուներ։



Հանդիսաւոր բացումը կատարեց գերշ. Սրբազն Հօր ձեռամբ, որից յետոյ ներկաների դէմ յանդիման բացւեց պատշաճորէն կահաւորած սրահը՝ գեղեցկօրէն դասաւորած վաճառասեղաններով, որոնց վրայ շարուած բազմագոյն ու բազմատեսակ առարկաները հայ կնոշ բարձր արևստի ու ճաշակի խօսուն վկաներն էին։ Խրաբանչիր այցելուի աշըք շոյում էին տօնական խաղալիքները, զարդերը, ձեռագործ շարֆերը, գլխարկները, հագուստելէնը, ինչպէս նաև ախորժալի զանազան ուտելիքներ՝ գաթաներ, քաղցրաւենիք եւ թթուներ։

Բարիգալստեան գեղեցիկ խօսքով, Միութեան նախագահութիւն տկն. Անահիտ Օհանեանն իր ուրախութիւնն յայտնեց մասնաւորապէս թեմակալ առաջնորդի ներկայութեան առիթով՝ դա համարելով մեծ պատիւ միութեան եւ ամբողջ համայնքի համար։ Ապա Բարձեալին իր գոհունակութիւնը յայտնելով հոգք. Հայր Սուրբը այսպէս արտավայտ-

լեց. «Առաջին հերթին փառք եւ գոհութիւն կը տանք Աստծուն, որ մեր այս գեղեցիկ առաւտուր աւելի պայծառացրեց՝ թեմակալ առաջնորդի ներկայութեամբ, որի շնորհիւ լիայոյս ենք այս վաճառքը օրհնաբեր կը լինի։ Բարձր ենք գնահատում Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց միութեան նախաձեռնութիւնը, որն ինչպէս միշտ համայնքում խանդավառութիւն ու աշխուժութիւն ստեղծելուց բացի, իր ամբողջ հասոյթով պէտք է օգտակար լինի սիրիահայութեան՝ այս պարագային Բերիոյ հայոց թեմի դպրոցի Փոնդին եւ կը ծառայի հայ աշակերտների ուսման եւ հայեցի դաստիարակման նկրական աշխատանքին։ Թող Աստւած օրհնի այս միութեան անդամներին եւ կանգուն ու հաստատ պահի իրենց ազգանւէր ու մարդասիրական աշխատանքներում»։



Ցուցահանդէս-վաճառքին բարի երթ մաղթեց նաև Համայնքի վարչութեան նախագահ՝ պր. Մելքոն Շիրանեանը՝ նորանոր յաջողութիւններ ցանկանալով միշտ գործունեալ եւ կազմակերպած Չամինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեանը։

Խսկ օրայ բարեմադրանքների թագն ու պասկը կազմեց թեմակալ առաջնորդի հայրական պատգամը, որն իր հերթին դրատական խօսք ուղղելով միջոցառումը կազմակերպող միութեանը, իր ուրախութիւնը յայտնեց նմանատիա միասնական աշխատամբների առկայութեան առիթով եւ ողջունեց Բերիոյ թեմի հայոց դպրոցին Շիրական օժանդակութիւն ցուցաբերելու գեղեցիկ մտայդացումը, իսկ միութեան անդամութիւնների համար հայցելով Բարձրեալի օրինութիւնը, մաղթեց նրանց ընտանեկան օջախին՝ երջանկութիւն, խանդավառութիւն եւ բարեբեր օրեր՝ սուրբ Ծննդեան տօների սեմին գտնունդ։

Այնուհետեւ գերշ. Սրբազն Հայրն իր ուղեկիցների հետ մուտք գործեց «Սրբոց Վարդանանց» դպրոց՝ իր այցելութեամբ դպրոցի պատասխանատուններին եւ աշակերտներին համելի անակնկալ մատուցելով։ Նա դասարան առ դասարան մտնելով մտերմիկ մթնոլորտում, հանդիպեց տարրական եւ ուղեցոյց օղակների աշակերտներին, հետաքրքրութեան նրանց ուսման ընթացիկ հարցերով եւ նրանց խրախուսեց միշտ լինեն ժիր ու աշխատասէր։ Տեսակցելով դպրոցի տնօրէնին առաջադիմութիւն եւ յաջողութիւն մաղթեց կրթօչախին իր անձնակազմով հանդերձ եւ անհուն գոհունակութեամբ հրաժեշտ տվեց ներկաներին։

ՏԻ Հ Յ Ո Ւ Թ Ո Ւ Յ Ա Ռ Ե Ր Ա Ը Խ Ա Բ Ա Ռ Ե Ր Ա Ը

Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան կողմից կեանքի կոչւած «Տարեցների տարւա» միջոցառումները կազմակերպող յանձնախումբն իր եզրափակիչ ձեռնարկը նշեց ուրբաթ՝ 2014 թւականի դեկտեմբերի 5-ին, «Մրցոց Վարդանանց» դարպոցի պահում։ Համայնքի տարեցների պատվին կազմակերպած այս ձեռնարկին ներկայ էին համայնքին հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գումանեանը, Համայնքային Վարչութեան անդամները եւ մեծ թուվ հրավորեալ պապիկներ, տատիկներ ու պատկառելի տարեցներ։



Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ յանձնախմբի նախագահ տկն. Մելինէ Յովհաննիսեանը։ Նա ամփոփ կերպով գեկոյց ներկայացրեց յանձնախմբի մէկամեայ գործունեութեան վերաբերեալ, որը բովանդակում էր նախաճեռնութիւններ, միջոցառումներ եւ դասախոսական երեկոներ։ Զեկոյցով մասնաւրապէն նշուած էր, որ յանձնախումբը հոգատար վերաբերմունք դրսեւորելով տարեցների հանդէս, այցելութեան է գնացել նրանց՝ հոգշ. Հայր Սուրբի առաջնորդութեամբ եւ բրշն. Ռազմիկ սրկ. Գալստանեանի ուղեկցութեամբ։ Աւարտելով գեկոյցը, տկն. Յովհաննիսեանը շնորհակալութիւն յայտնեց հոգշ. Հայր Սուրբին, նրա հայրական խորհուրդների եւ ցուցումների համար, Համայնքի վարչութեանը՝ յանձնախմբին հովանաւորելու համար, յանձնախմբի աշխատանքները համադրող պրն. Ռազմիկ Մարկոսեանին, ինչպէս նաև պրն. Մարտիկ Յովհաննիսեանին, որն իր երաժշտական գեղեցիկ կատարումներով ողջ հանդէսների ընթացքում զւարճալի պահեր մատուցեց ներկաներին։ Այնուհետեւ նա բեմ հրավորեց պրն. Ռազմիկ Մարկոսեանին որպէս օրիայ հանդիսավար։

Վերջին իր գեղեցիկ եւ դիպուկ արտայայտութիւններով, անեկդոտներով եւ մէջբերումներով աշխուժացրեց ձեռնարկը եւ բեմը տրամադրելով ներկաներին առիթ ստեղծեց կամաւորների համար արտայայտելու, որոնք ներկայացան բարեմաղթանքներով, երգերով ու ասմունքներով։

Իսկ ձեռնարկը ուրախ հանդէսի վերածեց շնորհալի երաժշտ Մարտիկ Յովհաննիսեանի երաժշտական խանդավառ կատարումների շնորհի։ Ծատ չանցած

հայկական ուրախ նագմերը պարի հրավորեցին բոլորին եւ ներկաները շրջպար կազմած զարդարեցին պարահրապարակը։

Տեղի ունեցան նաև հաճելի մրցոյթներ եւ յաղթողները արժանացան համեստ մրցանակների։

Հնչող բարեմաղթանքներին միացաւ Համայնքի վարչութեան նախագահ պրն. Մելքոն Շիրանեանը, որը բարձր գնահատեց յանձնախմբի կատարած աշխատանքները եւ շնորհակալութիւն յայտնեց յանձնախմբի անդամներին ցուցաբերած հետեւողականութեան, հոգատարութեան եւ կազմակերպածութեան համար։

Իրեւ եզրափակիչ խօսք հնչեց հոգշ. Հայր Սուրբի ոգեշունչ հայրական պատգամը, որը դրաւտելով յանձնախմբի իրագործած մէկամեայ աշխատանքը, ոյժ ու կորով մաղթեց անդամներին։ Հայր Սուրբն իր խորութեալ սերն ու գուրգուրանքը յայտնեց համայնքի անդամներին՝ ի մասնաւրի պատկառելի տարեցներին, մաղթելով նրանց երջանիկ ծերութիւն եւ երկարակեցութիւն։ Ցորդորեց համայնքի անդամներին միշտ լինել միասնական, կողք-կողքի եւ միահամուռ, որպէսզի յաշողութեամբ պասկի ցանկացած հաւաքական աշխատանք։ Հայր Սուրբն եզրափակելով իր խօսքը՝ իր հնչել եւ յուզաւած ձայնով, «Մայրիկ» երգը նիրեց բոլոր հայ մայութին, որն արժանացան ներկաների անխնայ եւ առատ ծափողացներին։

Վերջում տեղի ունեցաւ թէյասեղան եւ ճաշկերոյթ։

Առաօտեան ժամը 11-ից սկսած սոյն հանդէսը տեւեց մինչեւ կէսօրից յետոյ ժամը 4-ը, զւարթ ու անմուռնալի պահեր պարգևելով մասնակիցներին։



Սոյն յանձնախմբում ամենայն նիրածութեամբ աշխատեցին պրնեաց. Եղիշ Սղախանեանը, Վիկտ Սահակեանը, Ռոբերտ Գորգին եւ տկնեաց. Արմիկ Թորոսեանը, Քարմէն Յակոբեանը, Արմինէ Թահմազեանը, Սելինէ Յովհաննիսեանը, Լինա Մովսիսեանը եւ Լիդուշ Քամարզարեանը։

**ԱՅԱՆՈՒՍԱՅ ՀԱՆԻԿԱՇ ԾԱՀՐԱԾԱՀՐԻ «ԱՅՈՒՆ» ՄԱՆԱՌ ՊԱՏՈՒԶ -
ԱԽՆԱԿՐԹԱՐՄԱՆԴՐ**



Չորեքշաբթի՝ 2014 թվականի դեկտեմբերի 24-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահիրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչական կազմին եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպիլ էր Ամանորեայ հանդէս: Սոյն ձեռնարկին ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ հոգչ. S. Անանիա վլր. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի ներկայացուցիչը, Համայնքի վարչութիւնը, պատգամատրները եւ «Մրցոց Վարդանանց» դպրոցի ուսուցչական կազմը:



Դահլիճը գեղեցկօրէն զարդարած էր եւ ամենութեք տօնական տրամադրութիւն էր տիրում:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ դպրոցի նորանշանակ տեսչուին օրդ. Կարինէ Մինասքանեանը, որը շնորհաւորելով Ամանորը իր շնորհակալական խօսքը ուղղեց ազգային մարմիններին եւ ծնողներին, որոնք միշտ իրենց անվերապահ աջակցութեամբ նեցուկ են հանդիսացել դպրոցին եւ ոչ մի ջանք չեն խնայել դպրոցը ծաղկուն պահելու նիրական գործում: Ապա օրդ. Մինասքանեանը իր շնորհակալութիւնը յայտնեց դպրոցի նախկին տեսչուին տկն. Ալիս Մկրտչեանին՝ նրա ծաւալած բազմամեայ գործունէութեան համար:

Այնուհետեւ բեմը տրամադրեց ուրախ եւ վառ գոյներով զգեստաւորած սաներին, որոնք բեմ բարձրանալուն պէս իրենց խանդավառ երգ ու պարով ուրախ

պահեր նիրեցին հանդիսատեսին:

Մանուկների միջոցով հնչեցին մայրենիին եւ Ամանորին նիրած ուրախ երգեր եւ ասմունքներ՝ երաժիշտ Մարտիկ Յովհաննիսեանի նագակցութեամբ:

Իսկ դպրոցի սաների ուրախութիւնը բազմապատկեց, երբ յախնեցին բոլոր մանուկների սիրելի ծմբա պապն ու ծիմանուշը, որոնք մտերմիկ մթնոլորտում սաներին նիրեցին գեղեցիկ մրգեր:



Հանդէսի աւարտին բեմ հրավիրեց հոգչ. Հայր Սուլբը իր հայրական մաղթանքը արտայացտելու, որն ինչպէս միշտ իր ջերմ հնչերանգով դրաւտեց մանուկների ուրախ երգն ու տաղը, բարձր գնահատեց դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի կատարած առաքելութիւնը՝ հայ մանկանը հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան նիրական գործում: Այնուհետեւ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ իր շնորհաւորման խօսքն ուղղելով բոլոր ներկաներին՝ մաղթեց նրանց բաջառողջութիւն, ոյժ, կորով եւ նորանոր վերելքներ՝ անձնական, ընտանեկան եւ ազգային կեանքում:

Սոյն հանդէսի իրականացմանը իրենց համագործակցութիւնն էին ցուցաբերել այնք. Մարտիկ Յովհաննիսեանը՝ նագակցութեամբ եւ Գելիկ Խաչատրեանը՝ լուսանկարման եւ նկարահանման աշխատանքները ստանձնելով:

Ծրագրի աւարտին բոլոր ներկաների համար նախատեսել էր համեստ հիւրափոխութիւն:

ՆԻՒՐԱՏԻՌԻԹԻՆՆԵՐ

Ն.Զ.Հայոց առաքելական եկեղեցեաց վարդութիւն

- 5,000,000 ռիալ. Տէր Մարտիրոսեան ընտանիք՝ Արաքս Տէր Մարտիրոսեանի լիշտակին

Ս. Մինաս եկեղեցի

- 1,000,000 ռիալ. Մատիթա Վադանեան (Բաղումեան) Զարդ Վարդանեանի մահան տարեկիցի առթիւ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի

- 1,000,000-ական ռիալ. Որբանա եւ Զաք Մինաշիներ

Ս. Գէորգ եկեղեցի

- 1,000,000-ական ռիալ. Մատիթա Վարդանեան Աշխեն Վարդանեանի լիշտակին, Որբանա եւ Զաք Մինաշիներ

- 700,000 ռիալ. Տ. Մեսրոպ աւ. քին. Գալստանեան

- 500,000-ական ռիալ. Միշել Մուախանեան, Ալիս Մինասեան, Մարիամ Քաշանի

Խաչ գոյգելու դիմաց

- 200,000-ական ռիալ. Աստողիկ Դեմիաշեան, Ծաղկուշ Ղազարեան, Լորեթա Ծատուրեան

- 100,000-ական ռիալ. Նարէ Շահրազեան, Մարօ Զհարմահալի

Հանգուցեալ Գալստան Սարուխանեանի լիշտակին

- 1,500,000 ռիալ. Մաղագ եւ Ծուշիկ Սարեաններ

- 1,000,000-ական ռիալ. Սովորան եւ Մարօ Թորոսեաններ, Վարդուշ Սարուխանեան, Արմէն, Մատիթա եւ Վանենի Մանսուրեաններ

- 260,000 ռիալ. Ա. Մինաս Եկեղեցոյ յանձնախումբ

- 250,000 ռիալ. Մարօ եւ Մարտիր Դաթեաններ

- 200,000-ական ռիալ. Ցովսէփ եւ Անուշ Լալազարեաններ, Արմէն եւ Անուշ Նաւասարդեաններ, Ժիլերի Ղազարեան, Վարուժ Մատրէսունեան

- 150,000 ռիալ. Լուսի Մարտոյեան

- 100,000-ական ռիալ. Զաւէն Խաչկեան, Արշալուս Խուլազարեաններ, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ, Սերժիկ Քեշինան, Մոնթազէրի

Հանգուցեալ Մարտիրոս Ստեփանեանի լիշտակին

- 200,000-ական ռիալ. Բաղդասար Շահնազարեան, Սուրէն Մինասեան

- 100,000-ական ռիալ. Մարգարիտ Զարգարեան, Ղազար Ցովսէփեան, Արաքս Մինասեան, Մարիամ Զարգարեան

Հանգուցեալ Եղինար Թորոսեանի լիշտակին

- 500,000-ական ռիալ. Վահիկ Թորոսեան, Ծովիկ Թորոսեան

- 300,000 ռիալ. Ռուանդ եւ Արաքս Հազարմալեաններ

- 200,000 ռիալ. Ռազմիկ Թորոսեան

- 150,000 ռիալ. Սիլվարդ Թորոսեան

- 100,000-ական ռիալ. Անինիկ Քեշիշեան, Սօնիկ Կիրակունեան, Լուսի Մարտոյեան, Արաքս Թորոսեան

- 50,000 ռիալ. Պերճիկ Քամարզարեան

Հանգուցեալ Արաքս Տէր Մարտիրոսեանի լիշտակին

- 300,000 ռիալ. Արիփա Տէր Մարտիրոսեան

- 200,000 ռիալ. Հիլդա Տէր Մարտիրոսեան

Հանգուցեալ Սուսանքար Յակոբեանի լիշտակին

- 200,000 ռիալ. Սենակ Թորոսեան

- 150,000-ական ռիալ. Արտուր եւ Ֆիլիդա Ղարիբեաններ, Ժանեթ եւ Արաքս Աղջախանեաններ

- 100,000-ական ռիալ. Երանդ Խաչիկեան, Մինաս Թահմագետեան

Հանգուցեալ Վարդէկ Յակոբեանի լիշտակին

- 1,500,000 ռիալ. Ռաբերթ Ղետնդեան ընտանեօր եւ Քառուլին Ղետնդեան ընտանեօր

- 700,000 ռիալ. Մանկապարտէզ-նախակրթարանի աշխատակազմ

-300,000 ռիալ. Վահիկ Ալյազեան

-200,000-ական ռիալ. Զանիկ Ղազարեան, Ալբերթ Ղազարեան, Հրազ Դաթեան, Ռուանդ եւ Երգինէ Ասատրեաններ

-100,000-ական ռիալ. Արա եւ Հոփիսիկ Սիմոննեաններ, Ռուանդ Ղարախանեան

Հանգուցեալ Բարգէն Ղարախանեանի լիշտակին

-300,000 ռիալ. Դորիս Արզու

-200,000 ռիալ. Արա Սիմոննեան

-100,000 ռիալ. Աւո Եւ Խուլդարախշեաններ

Հանգուցեալ Զարդար Մինասեանի լիշտակին

-500,000-ական ռիալ. Ասպետ Խաղողվեան, Խորեն Մինասեան

-400,000-ական ռիալ. Ամիրխան Ցովսէփեան, Խաչիկ Ցովսէփեան

-300,000-ական ռիալ. Լուսիկ Յակոբեան, Զաւէն Սիմոննեան, Սարուշ Դաթեան

-250,000 ռիալ. Վարդէկ Պետրոսեան

-220,000 ռիալ. Մասիս Պարսանեան

-200,000-ական ռիալ. Մարշիկ Մինասեան, Արսէն Շահրաբան, Արմէն Սամուտիստեան, Սարի Դաթեաններ

-150,000 ռիալ. Վազգէն Օհաննեան

-120,000 ռիալ. Սերժիկ Քեշիշեան

-100,000-ական ռիալ. Վարդան Եւ Ռիթա Մկրտչեաններ, Գրիշ Թորոսեան

-50,000 ռիալ. Սրբուհի Ցովհաննիսեան

Հանգուցեալ Անահիտ Կիրակոսեանի լիշտակին

-1,500,000 ռիալ. ԱՄՆ-ի ընկերներ

-1,000,000-ական ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւլ, Սերոն Դաթեան, Ցովիկ Եղինակ Ցովսէփեաններ, Վահի Եւ Թեմի Բարսեղեաններ

-750,000 ռիալ. Սօսէ, Արփի, Անգինէ, Ալենուշ Եւ Անգինէ

-500,000-ական ռիալ. Հայութեաց Բարեգործական Ընկերութիւն, Արթին Դաթեան, Երանդ Պողոսեան, Մարթին Եւ Կարինէ Մարեաններ, Ռազմիկ Եւ Արաքս Մկրտչեաններ, Ռուսիկ Եւ Լիդա Տէր Գալուստ, Անդրանիկ Եւ Ժենիկ Մինասարաններ, Արդալ Եւ Էդմին Ցովսէփեաններ, Ասպետ Խաղողվեան

-400,000-ական ռիալ. Ասպետ Եւ Լորետա Վարդաններ, Արմինէ Եւ Արփինէ Նաւասարդեաններ

-300,000-ական ռիալ. Հայ Ռոստ Զհարմահալ Միութեան, Սերժիկ Քեշիշեան, Սոնիա Քամարզարեան, Սերժիկ Եւ Ալենուշ Ասատրեաններ, Կայծակ Կարապետեան, Սար Եւ Ալիս Դաթեաններ

-250,000 ռիալ. Վարդէկ Պետրոսեան

-200,000-ական ռիալ. Գասպար Մարտիրոսեան, Սօնիա Միրզաբեկան, Նայիր Ալյազեան, Արաքս Պողոսեան, Մարգարիտ Զարգարեան

-150,000-ական ռիալ. Մինաս Թահմագետեան, Վահիկ Մկրտչեան

-100,000-ական ռիալ. Մասիս Քեշիշեան, Ցովսէփ Ալենուշեան, Սօնիկ Կիրակոսեան, Հայկ Ալյազեան, Արաքս Աղջախաններ, Մէրի Մինասարաններ, Արմէն Բաղումեան, Անուշ Ցովհաննիսեան

-50,000 ռիալ. Պերճիկ Քամարզարեան

Հակիմահրի Հայ համայնքի Վարդութիւն

«Տարեցների տարւայ» միջոցառման առթիւ

- 1,000,000-ական ռիալ. Սովէյման Փանոսեան:

- 600,000-ական ռիալ. Սամել Խոսրովիսեան:

- 500,000-ական ռիալ. Նուշ Ցովհաննիսեան, Եսայի Եւ Սերդ

Բաղրմանաներ, Արմենումի Գալատանեան, Վարուժ Փանոսեան:

- 400,000-ական ռիալ. Գրիշ Թորոսեան:
- 300,000-ական ռիալ. Մեսրոպ Առաքելեան, Արամ Բաբումեան, Խարթումիկ Փիլոսեան:
- 200,000-ական ռիալ. Եղիշ Միրզախանեան, Կարապետ Մինասեան, Զարդար Մինասրանեան, Ծովիկ Խաչատրեան, Վարուժ Թահմագեան, Գարեգին Դավթեան, Գառնիկ Անդրիասեան, Երեմ Յարութիւնեան, Թորոս Թորոսեան, Կարօ Գալստեան, Չամէն Մինասրանեան, Մովսէս Միրզախանեան, Օվսան Ստափանեան, Զամիկ Առաքելեան, Լեւն Մարկոսեան, Վազգէն Յարութիւնեան, Բիւզանդ Բարումեան, Արուս Ղարախանեան:

- 150,000-ական ռիալ. Տէն. Բարթեան, Թաղէոս Դավթեան, Ցովհաննես Թորոսեան, Անդրիաս Քեշիշեան, Անդրանիկ Ղաջարեան:

- 100,000-ական ռիալ. Արմենակ Թահմագեան, Այիդա Աղամալեան, Նազիկ Նազարեան, Պերճիկ Պետրոսեան, Ալֆրէդ Թումանեան:

Շահինչահրի Հայոց ազգ. «Սրբոց Վարդանանց» դպրոց

- 300,000-ական ռիալ. Չամէն Կիրակոսեան

Սպահանի հայոց բեմի Կորպական խորհուրդ

- 10,000,000 ռիալ. Ռազմիկ Տէր Գրիգորեան՝ Անահիտ Կիրակոսեան (Տէր Գրիգորեան) յիշատակին
- 5,000,000 ռիալ. Տէր Մարտիրոսեան ընտանիք՝ Արաքս Տէր Մարտիրոսեանի յիշատակին

Սպահանի հայոց բեմի Բարեսիրական մարմին

- 5,000,000 ռիալ. Ռազմիկ Տէր Գրիգորեան՝ Անահիտ Կիրակոսեան (Տէր Գրիգորեան) յիշատակին

Ծանր հիւանդներին օճախակուրեան ֆոնդ

- 1,000,000 ռիալ. Ն.Զ. Հայոց ազգ. «Քանանեան» դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ՝ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին փոխան ծաղկեպասակի
- 500,000 ռիալ. Ն.Զ. Հայոց ազգ. «Կատարինեան» դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ՝ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին փոխան ծաղկեպասակի
- 300,000 ռիալ. Նորիկ եւ Արսինէ Աբդալեաններ՝ Զարթիկ Մինասեանի յիշատակին

Հայ ուս. «Զհարմահալ» միութեան Ն.Զ. մասնաշիւտ

- 5,000,000 ռիալ. Ռազմիկ Տէր Գրիգորեան՝ իր կնոշ՝ Անահիտ Կիրակոսեանի յիշատակին
- 1,000,000 ռիալ. Հայրուկ Մովսէսեան

- 500,000-ական ռիալ. Գասպար Մարտիրոսեան, Անժել Անդրիասեան

- 300,000 ռիալ. Անդրանիկ Բունեաթեան
- 200,000-ական ռիալ. Մկրտիչ Զհարմահալի, Սարեմիկ Միրզապէկան, Յաւերժիկ Կարապետեան, Ֆրիդա Ալլահվերդեան, Ծաղկուշ Եղգարեան

- 160,000 ռիալ. Սիրանուշ Բարումեան

- 150,000 ռիալ. Հենրիկ Բաբայեան:

Հայաստանի հանրապետութեան անկախութեան 23-րդ տարեգարձի տօնակատարութեան առթիւ

- 500,000-ական ռիալ. Սիրանուշ եւ Ային Աբդալեաններ, Սոնիա Միրզապէկան, Անուշ Օհանեան, Մկրտիչ Զհարմահալի, Հայրիկ Կարապետեան, Սերոժ Վարդանեան

- 300,000-ական ռիալ. S. Մեսրոպ աւ. քին. Գալստանեան, Հայրուկ Մարգարեան

- 200,000-ական ռիալ. Վաչէ Շահիջանեան, Արմէն Ղարախանեան, ոմն

- 150,000-ական ռիալ. Նւարդ Բունեաթեան, Էլսիկ Պետրոսեան

- 100,000-ական ռիալ. Ովսաննա Ղարախանեան, Համասփիւն Մարգարեան, Պերճիկ Քամարզարեան

«Տարեցների տալրա» նկրաւած ձեռնարկ

- 500,000-ական ռիալ. Վարուժ Ղարախանեան, Մկրտիչ Զհարմահալի

- 400,000 ռիալ. Սոնիա Միրզապէկան

- 300,000 ռիալ. Սերոժ Վարդանեան

- 200,000-ական ռիալ. Սիրանուշ Բարումեան, Նւարդ Վարդանեան, Արեկիկ Ալլահվերդեան, Մարօ Ծատուրեան, ոմն

- 150,000 ռիալ. Սաթօ Կիրակոսեան

- 60,000 ռիալ. Համասփիւն Մարգարեան

Հայ դաշի Նոր Չուրայի յանշնախումբ

- 5,000,000 ռիալ. Վրէժ Տէր Մարտիրոսեան՝ Արաքս S. Մարտիրոսեանի մահիւն առթիւ

Դարուուն գիտի «Ա. Նշան» եկեղեցու վարդութիւն

- 10,000,000-ական ռիալ. Վազրիկ Մարկոսեան, Սթելլա Սարգսեան

- 6,000,000 ռիալ. Արա Սարգսեան՝ իր հօր՝ Աբել Սարգսեանի յիշատակին

Ասսոտուր եւ Վարդուշ Դիլանչեանների յիշատակին

- 1,000,000 ռիալ. Սթելլա Դիլանչեան

- 100,000-ական ռիալ. Անուշ Դիլանչեան, Ծաղկուշ Դիլանչեան, ՈՒմա Դիլանչեան

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, Համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Այլիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմագեանը, իսկ Շահինչահրի Հայ Համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Վիոյեթ Յարութիւնեանը:

Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրել է պր. Գեւիկ Խաչատրեանը:

ՄԵՐ ՀԱՍՎԵՆ

Խլիֆե گրի արանե Ջլվայ աշխախումբ

և Ջնու Արան

Ճնծոց պտի 81735/115

Armenian Cathedral - P.O.Box 81735-115

New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjughha.ir

WWW.Vank.ir

E-mail: Sourbv@yahoo.com

Tel: +98-311-6243471-2

Fax: +98-311-6270999

ՆՈՐ ԶԼՒՐԱՅԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵԿԻ



ՀԻՄԱՐՈՒԹՅԱՆ
400-ԱՄԵԱԿ